



Յայտարարութիւն Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան XXI Համագումարի

Սեպտեմբեր 22-ից 24-ը քաղաքամայր Երեւանում ընթացաւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան XXI հերթական փակ Համագումարը, որին մասնակցում էին աշխարհի 15 եւ Հայաստանից ընտրուած շուրջ 100 կուսակցական պատուիրակներ: Համագումարի մեկնարկը տրուեց Եռաբլուրում, որտեղ մասնակիցները յարգանքի տուրք մատուցեցին Արցախեան ազատամարտում նահատակուած ազատամարտիկներին:

Համագումարի մասնակիցները, քննարկելով Հայաստանում եւ Սփիւռքում հայ ժողովրդի ու Հայրենիքի առջեւ ծառայած մարտահրաւերները եւ, որոշելով ՍԳՀԿ-ի առաջիկայ 4 տարուայ հաւաքական ռազմավարութիւնն ու գործունէութեան ոլորտը, որոշեցին.


1. Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնն առաջիկայում նոյնպէս պէտք է շարունակի իր կազմակերպչական, քաղաքական ու տնտեսական առաջնահերթութիւնները ուղղել դէպի Մայր Հայրենիք:

2. ՍԳՀԿ XXI համագումարը գտաւ, որ Հայաստանի բնակչութեան ստուար մասը երկրում տիրող սոցիալական անարդարութեան պատճառով ապրում է տնտեսապէս անբաւարար վիճակում, ինչը համարում է արտագաղթի գլխաւոր պատճառներից մէկը, որի կասեցումը ազգային առաջնահերթութիւն է: Քաղաքական դաշտը վատառողջ է, չեն գործում արդար մրցակցութեան պայմանները: Այս համգամանքի եւ սոցիալական արդարութեան բացակայութեան հետեւանքով, չնայած որոշակի առաջընթացի, Հայաստանի Հանրապետութիւնում դեռ օրէնքի լիակատար գերակայութիւնն ապահովուած չէ:

3. Համագումարը գտաւ, որ Հայաստանի Հանրապետութիւնը պէտք է վարի տարածաշրջանային աշխարհաքաղաքական իրավիճակներից թելադրուած արտաքին քաղաքականութիւն: Համագումարը դրական է համարում Եւրասիական տնտեսական միութիւնում Հայաստանի Հանրապետութեան անդամակցութիւնը, ինչպէս նաեւ յոյս է յայտնում, որ մեր երկրի արտաքին քաղաքական առաջնահերթութիւններից մէկը պէտք է շարունակի մնալ Եւրամիութեան հետ ասոցացման համաձայնագրի վաւերացումը:

4. Ս.Գ. Հնչակեան Կուսակցութիւնը Հայաստանում գործում է որպէս անկախ քաղաքական միակուր, այն իրաւունք ունի համագործակցելու բոլոր այն քաղաքական կազմակերպութիւնների հետ, ովքեր ընդունում են Հնչակեան կուսակցութեան սկզբունքներն ու գաղափարախօսութիւնը, յատկապէս, ժողովրդավարութեան եւ սոցիալական արդարութեան սկզբունքները:

5. ՍԳՀԿ XXI համագումարը գտաւ, որ Արցախի հիմնախնդիրը հայ



ժողովրդի եւ յատկապէս Հնչակեան կուսակցութեան համար մնում է առանցքային հիմնախնդիր եւ շեշտում է, որ Կուսակցութիւնն իր բոլոր անհնարաւորութիւնով պէտք է ընդդիմանայ ադրբեջանական ցանկացած ագրեսիային՝ լինի այն ռազմական, քաղաքական, քարոզչական, թէ տնտեսական:

Համագումարը գտաւ, որ Արցախի հիմնախնդիրն անհնար է լուծել ռազմական ճանապարհով, այլ միայն ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքի եւ իրաւահաւասար բանակցութիւնների արդիւնքում ձեւաւորած բանաձեւերի հիման վրայ:

Համագումարը շեշտեց միջազգային հարթակներում Արցախի հիմնախնդիրն աւելի լայն ճանաչում ապահովելու միտուած ջանքերը բազմապատկելու անհրա-

ժեշտութիւնը:

Համագումարը վերահաստատեց Արցախի Հանրապետութիւնը բանակցային սեղան վերադարձնելու անհրաժեշտութիւնը:

Համագումարը վերահաստատեց, որ ՍԳՀԿ-ի գործիչները կարող են շարունակել իրենց քաղաքական փոխարարութիւնը թուրքական առաջադէմ ձախակողմեան կուսակցութիւնների եւ անհատների հետ իրրեւ նախապայման ընդունելով վերջիններիս կողմից Հայոց ցեղասպանութիւնն անվերապահ ընդունելու փաստը:

Համագումարը քննարկեց ՍԳՀԿ-ի ներքին կազմակերպչական հարցեր:

Սեպտեմբերի 24-ին աւարտուեց համագումարի աշխատանքները, որի արդիւնքում ընտրուեց նոր Կենտրոնական վարչութիւն հետեւեալ կազմով.

1. Համբիկ Սարաֆեան (ատենապետ, Ամերիկայի Միացեալ Նահանգներ)
2. Վազգէն Համալեան (փոխատենապետ, Սիրիայի Արաբական Հանրապետութիւն)
3. Նարեկ Գալստեան (քարտուղար, Հայաստանի Հանրապետութիւն)
4. Յակոբ Տիգրանեան (Կիպրոս)
5. Շաւարշ Ալիսեան (Գանատա)
6. Մանօ Շիրումեան (Հայաստանի Հանրապետութիւն)
7. Ալեքսան Բեռլանեան (Լիբանան)
8. Կիրակոս Թութունճեան (Գանատա)
9. Ծործ Յակոբեան (Ամերիկայի Միացեալ Նահանգներ)
10. Թադէոս Քօրոյլեան (Ամերիկայի Միացեալ Նահանգներ)
11. Գեորգ Սաչլեան (Ֆրանսա)

Սարգսեան Ժամկէտ Տուած է Անգարային՝ Հայ-Թրքական Արձանագրութիւնները Վաւերացնելու

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան ՄԱԿ-ի ամպիոնէն վերջնական ժամկէտ տուած է պաշտօնական Անգարային՝ 2009 թուականին կնքուած հայ-թրքական արձանագրութիւնները վաւերացնելու համար: «Թուրքիայի ղեկավարութիւնը սխալուած է, եթէ մտածում է, որ ինքը կարող է առջաւել տ պատանդ վերցնել այդ փաստաթղթերը եւ վաւերացնել միայն իրեն յարմար առիթով», - յայտարարած է Սերժ Սարգսեան, տեղեկացնելով, որ պատրաստ է չեղեալ համարել այդ փաստաթուղթերը մինչեւ յաջորդ գարուն, երբ ըստ հուլիսի պիտի լրանայ իր պաշտօնավարման ժամկէտը:

«Արձանագրութիւնները բանակցուել են ներկայիս պայմաններում՝ առկայ խնդիրներին լուծում գտնելու համար: Դրանց կենսագործման ուղղութեամբ շարունա-

կաբար որեւէ դրական տեղաշարժի բացակայութեան պայմաններում Հայաստանը այդ երկու արձանագրութիւնները յայտարարելու է առ ոչինչ: Մենք 2018 թուականի գարունն ենք մտնելու առանց այդ, ինչպէս, ցաւօք սրտի, փորձը ցոյց տուեց, սին արձանագրութիւններին», - յայտարարած է Սերժ Սարգսեան:

Շուրջ 15 վայրկեան տեւած ելոյթի մէջ ամենաձաւալուն հատուածը նուիրուած էր դարաբաղեան հակամարտութեան: ՄԱԿ-ի բարձր ամպիոնէն Սերժ Սարգսեան յայտարարած է, որ կողմերը տակաւին շատ հեռու են խաղաղութենէն, անոր մէջ մեղադրելով պաշտօնական Պաքոն:

«Անցած տարուայ Ապրիլին Ատրպէյճանի սանձազերծած քառօրեայ պատերազմը ապացուցեց, որ Ատրպէյճանը շարունակում է

հետապնդել Արցախի ժողովրդին բնաջնջելու իր նպատակը: 2016 թուականին ծաւալուած ռազմական գործողութիւնների ընթացքում Ատրպէյճանի զինուած ուժերը կատարել են պատերազմի մի շարք չանցագործութիւններ քաղաքացիական բնակչութեան եւ ռազմագերիների հանդէպ», - հաստատած է Հայաստանի նախագահը:

Վերստին ընդգծելով, որ հակամարտութեան խաղաղ կարգաւորումն այլընտրանք չունի, Սերժ Սարգսեան առանձնացուցած է երկու նախապայման՝ Արցախի ժողովրդի ազատ կամքի արտայայտութեան իրաւունքն ու անվտանգութեան ապահովումը: «Մնացած հարցերն ածանցեալ են եւ կը լուծուեն խնդրի կարգաւորմանը գուճահեռ», - յայտարարած է Հա-

Լեւոն Արոնեան Դարձաւ Աշխարհի Բաժակակիր

Թիֆլիսի մէջ ընթացող ճատրակի աշխարհի բաժակի խաղաղութեան եզրափակիչ փուլէն ետք տեղի ունեցած թայ-պրէյքի մէջ, յաղթելով չինացի մասնակից Տին Լիֆէին, ճատրակի հայ վարպետ Լեւոն Արոնեան դարձաւ աշխարհի բաժակակիր:

«Արմէնբրէյս»-ի հաղորդմամբ, մրցաշարին մասնակցած էին ճատրակի 128 վարպետներ աշխարհի տարբեր երկրներէ: Արոնեան նաեւ իրաւունք ստացած է մասնակցելու 2018 թուականի Մարտի 10-28 Պերլինի մէջ կայանալիք հաւանորդներու մրցաշարին:

Լեւոն Արոնեան աշխարհի բաժակակիր դարձած էր նաեւ 2005 թուականին: Ճատրակի հայ վարպետը ճատրակի ողիմպիատայի եռակի, ճատրակի աշխարհի խմբակային առաջնութեան յաղթող է:

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Արցախը Սերժ Սարգսեանի 4 Միլիոնի Մէջ Այլ Կերպ Չի Ստացուելու

ՅԱԿՈՒ ԲԱԴԱԼԵԱՆ

Արցախի կիսանախագահականից նախագահական կառավարման անցումային փուլի նախագահ Բակո Սահակեանի հրամանագրով Արցախի կառավարութեան նոր կառուցուածքի ուղղափառ նորութիւնը վերաբնակեցման նախարարութիւնն է: Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարութիւնը այլեւս կը լինի աշխատանքի եւ սոցիալական հարցերի, վերաբնակեցման նախարարութիւն:

Թէեւ, կը լինի, թէ միայն կը կոչուի, դեռեւս պարզ չէ: Բայց այն, որ Արցախը ունի այլեւս վերաբնակեցման նախարարութիւն, ինքնին յատկանշական փաստ է, թէեւ պետական մակարդակով եղել են վերաբնակեցման քաղաքականութեան մասին յայտարարութիւններ, որոշումներ, տարբեր քայլեր: Այսինքն, վերաբնակեցման քաղաքականութիւն Արցախի իրականացում է վաղուց: Տուեալ պարագայում հարցն այն է, թէ ի՞նչ է փոփոխելու արդիւնաւետութեան հարցում, տեղի է ունենում միայն դեկլարատիւ անուանափոխութիւն, թէ՞ վերաբնակեցման գործընթացին այսպէս ասած տալով նախարարական կարգավիճակ, Ստեփանակերտը անցնում է այդ քաղաքականութեան որակապէս այլ մակարդակի կամ մասշտաբի:

Անկասկած է, որ Արցախն ունի վերաբնակեցման առաւել դինամիկ ու մասշտաբային գործընթացի կարիք: Այն անշուշտ պայմանաւորուած է զգալի ռեսուրսային կամ ֆինանսական խնդիրներով: Միւս կողմից ասել, որ մինչ այժմ արուածը օբիեկտիւօրէն առաւելագոյնն է, կը լինի թերեւս ինքնախաբէութիւն:

Հայրենիք-Սփիւռք համաժողովում Սերժ Սարգսեանը յայտարարեց, որ Հայաստանն այլեւս հասունացել է այդ մասշտաբի խնդիր դնելու եւ այն լուծելու համար: Սարգսեանը կրկնեց մինչեւ 2040 թուականը 4 միլիոն բնակչութեամբ Հայաստան ունենալու նպատակադրումը

Հետաքրքրական է, որ Արցախի կառավարութեան կազմում վերաբնակեցման նախարարութեան ձեւաւորումը տեղի է ունենում Հայաստանում համարժէք նպատակի հռչակման ֆոնին՝ հայրենադարձութիւն:

Հայրենիք-սփիւռք համաժողովում Սերժ Սարգսեանը յայտարարեց, որ Հայաստանն այլեւս հասունացել է այդ մասշտաբի խնդիր դնելու եւ այն լուծելու համար: Սարգսեանը կրկնեց մինչեւ 2040 թուականը 4 միլիոն բնակչութեամբ Հայաստան ունենալու նպատակադրումը:

Այդ խնդիրը լուծելու համար նա ապահիւնում է համահայկական

աջակցութիւն: Ինչքանով են փոխկապակցուած Հայաստանի հայրենադարձութեան եւ Արցախի վերաբնակեցման գործընթացները: Դրանք երկու «կիսագնդեր» են, «հաղորդակից անօթներ» են: Ինչպիսի ձեւակերպում եւ գնահատական էլ հնչի, մի բան անկասկած է, որ հայրենադարձութիւնն ու վերաբ-

նակեցումը չեն կարող չլինել մէկ խնդիր, մէկ ամբողջական գործընթաց եւ այդ իմաստով դրանք պէտք է անխուսափելիօրէն դիտարկուեն թերեւս մէկ ամբողջութեան մէջ:

Այլ է հարցը, որ գուցէ գուտ իրաւաքաղաքական նրբերանգները ելնելով Հայաստանը պէտք է գործածի հայրենադարձութիւն եզրը, բայց առանց դրանում Արցախի վերաբնակեցման խնդրի ներառման եւ առաւել խորքային, կոնկրետ եւ մանրամասն համահայկական քննարկումներում շօշափման, հայրենադարձութեան գործընթացը լինելու է թերի:

Ինչ խօսք, այլ հարց է, թէ

Պարուն Ստացաւ Ինչ Ուզում էր, Երեւանը Հրաժարուեց Բանակցութիւնները Վերսկսելու Իր Գլխաւոր Պայմանից

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները տարածել են յայտարարութիւն, ըստ էութեան՝ ամփոփելով Հայաստանի եւ Ատրպէյճանի արտգործնախարարների նախօրէի հանդիպումը եւ նախապատրաստելով Սերժ Սարգսեանի իչսամ Ալիեւ հանդիպումը: Ընդհանուր ձեւակերպումներով հարուստ յայտարարութիւնը թւում է՝ չունի որեւէ դիւանագիտական ենթատեքստ եւ միայն փաստերի շարադրանք է: Սակայն այդպէս է միայն արտաքուստ, առաջին հայեացքից, որովհետեւ փաստաթղթում, ըստ էութեան, շարադրում է Սարգսեան-Ալիեւ հնարաւոր հանդիպման հնարաւոր օրակարգը: «Համանախագահներն ակնկալում են, որ նախագահների հանդիպումը կը նպաստի կողմերի միջեւ վստահութեան եւ կարգաւորման շրջանում մնացած առանցքային հարցերի շուրջ փոխզիջումային լուծումներ գտնելու հարցում քաղաքական կամքի ամրապնդմանը: Նախարարներն իրենց յանձնարարութիւնն են յայտնել աշխատելու համանախագահների հետ՝ մօտ ապագայում յաջող գաղաթնափոփոխի նախապատրաստման ուղղութեամբ», - ասուած է միջնորդների յայտարարութեան տեքստում:

Ինչպէս նկատում ենք՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահութեան օրակարգից սահուն կերպով դուրս է մնացել Վիեննայի եւ Սանկտ-Պետերբուրգի պայմանաւորուածութիւնների կատարման անհրաժեշտութեան պահանջը եւ գործընթացը տեղափոխուել է կարգաւորման բովանդակային քննարկման հարթութիւն: Յամենայն դէպս, սա համանախագահութեան առա-

ջին յայտարարութիւնն է, որտեղ բառ անգամ չկայ Վիեննայի եւ Սանկտ-Պետերբուրգի պայմանաւորուածութիւնների մասին: Սա հայկական դիւանագիտութեան հերթական պարտութիւնն է, որովհետեւ Երեւանը փաստացի հրաժարուած է ապրիլեան պատերազմից յետոյ իր որդեգրած համարժէք մարտավարութիւնից, թէ՛ հնարաւոր չի համարում կարգաւորման գործընթացի վերականգնումը, քանի դեռ չի մասն գծում ներդրած չեն հետաքննութեան մեխանիզմները:

Կարող ենք գալ հետեւութեան, որ Մոսկուայի հետեւողական ճնշումները Հայաստանի իշխանութիւններին վրայ տուեցին իրենց արդիւնքը եւ դարաբաղեան գործընթացը վերադարձաւ ի շրջան ուր, այսինքն՝ այն վիճակին եւ ստատուս-քուոյին, որոնք առկայ էին մինչեւ 2016-ի Ապրիլը եւ, ըստ էութեան, հանգեցրեցին քառօրեայ պատերազմին: Ի դէպ, խորապէս համոզուած ենք, որ Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդեանի սկանդալային ելույթը Հայաստան-Սփիւռք համաժողովում պատահականութիւն չէր եւ խորհրդանշում էր հենց Երեւանի դարաբաղեան քաղաքա-

կանութեան մէջ տեղի ունեցած մարտավարական շրջադարձը:

Դրա մասին է անուղղակիօրէն խօսում նաեւ այն փաստը, որ ատրպէյճանական լրատուամիջոցների հաղորդմամբ՝ Պաքուն համաձայնուել է ընդունել համանախագահների որոշ առաջարկներ՝ «առարկայական» բանակցութիւնները վերականգնելու համար: Շատ աւելի մտահոգիչ է, որ այս ամէնը տեղի է ունենում ՄԱԿ-ի գլխաւոր ասամբլեայի նստաշրջանում Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի ռազմատենչ ելույթի եւ միջազգային հանրութեանը հասցեագրուած շանտաժի ֆոնին: «Եւ եթէ կարիք լինի, մենք կրկին կը պատժենք ազրեյսորին, ինչպէս որ արեցինք 2016 թուականի Ապրիլին», - մի քանի օր առաջ Նիւ Եորքում յայտարարել էր Իլհամ Ալիեւը: Երբ այս յայտարարութիւնից յետոյ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներն իրենց յայտարարութեան մէջ չեն չիշատակում Վիեննայի եւ Սանկտ-Պետերբուրգի պայմանաւորուածութիւնների մասին, ապա ակամայից լեգիտիմացնում են նաեւ նոր պատերազմ սկսելու Ալիեւի շանտաժը:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

«ԼՐԱԳԻՐ»

Մասախա
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ՝
ՍՈՅՒԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԵ ԱՏԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնոր հոն արտայայտուող բոլոր միտքերը

www.massisweekly.com
Updated every Frida

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Սամուէլ Բաբայեանի Գործով Իրեղէն Ապացոյցը Դատարան Բերուած է



Մեղադրող դատախազն անձամբ կը բանար գէնքին վրայ փաթեթուած փոլիէթիլէնը, ապա նաեւ խողովակի երկու փականները, ցոյց տալու համար, որ ներսը հրթիռ կայ. - «Մեզ հետաքրքրում է համարը էդ խողովակի վրայ արտացոլուած, եւ խողովակի մէջ որեւէ իր կա՞նք, թէ չկայ: Հրթիռային համակարգի համապատասխան հատուածը երեւում ա, մնացածը փորձագէտի եզրակացութեամբ արձանագրուած ա»:

Լեւոնային Ղարաբաղի Պաշտպանութեան նախկին նախարար Սամուէլ Բաբայեան, սակայն, յայտարարած է, որ անգամ եթէ խողովակին մէջ հրթիռ կայ, այն առանց մարտկոցի, որպէս գէնք,

անպիտան է. - «Սա կոչուում ա պալլանքա: Սա իրանից ոչ մի վտանգ չի ներկայացնում»:

Այդուհանդերձ, մեղադրող դատախազ Արամ Արամեան պնդած է, որ դատարան բերուած գինատեսակը հրթիռ կը պարունակէ. - «Խնդրեմ, յարգելի դատարան, կարմիր ծայրով ինչ-որ առարկայ կայ մէջը»:

Սամուէլ Բաբայեան հակադարձած է. - «Դա կարող ա լինի խողովակի մէջ, բայց դա չազդուէր խփէս, կամ կրակի վրայ դնես, դա չի պայթի: Դա պայթուցիկ չէ: Մինչեւ պայթուցիչ չլինի, դա գինատեսակ չէ... Ասենք, փամփուշտի վրայ փրսթոն չկայ, կարա՞ք կրակէք»:

Ելեւմուտի նախարարի Կանխատեսմամբ Աճը Պիտի Ըլլայ Նախատեսուածէն Աւելի

Տնտեսական աճը տարեվերջին, ամենայն հաւանականութեամբ, պիտի գերազանցէ պիւտձէին մէջ դրուած 3,2 տոկոսը: Լրագրողներու հետ հանդիպման ժամանակ նման կանխատեսում ըրած է Ելեւմուտի նախարար Վարդան Արամեան, նշելով, որ ՀՆԱ-ի աճի անցեալ տարի արձանագրուած փոքր արդիւնքը (ընդամէնը 0,2 տոկոս) հետեւանք էր գիւղատնտեսութեան մէջ արձանագրուած անկման, նաեւ այդ ոլորտին մէջ վիճակագրութեան ճշգրտման:



Հայաստանի Ելեւմուտի նախարար Վարդան Արամեան տոկոսի: Միայն արտաքին պարտքը պիտի կազմէ 5,4 միլիարդ տոկոս: Վարդան Արամեան, այս թիւերը մտահոգիչ չի նկատել: «Մենք դրսից պարտք ենք վերցրել, ներդրումներ ենք արել: Նորմալ է, որ տնտեսութիւնում անկում չի գրանցուել, մինչդեռ տարածաշրջանում եւ ԵԱՏՄ երկրներում՝ բոլորի մօտ եղաւ այդ անկումը, որովհետեւ Ռուսաստանի ազդեցութիւնը բաւականին մեծ էր», - ըսած է նախարարը:

«Մասնագիտական տեղեկատուութեան ներդրումը ցոյց է տալիս, որ մինչեւ տարեվերջ մենք պիւտձէի հիմքում դրուած 3,2 տոկոսի տնտեսական աճից բարձր ենք լինելու: Մեր կանխատեսմամբ, մինչեւ տարեվերջ կ'ունենանք 4,3 տոկոս իրական տնտեսական աճ»:

Պետական պարտքը մինչեւ տարեվերջ աւելի պիտի մեծնայ: Եթէ 2016-ին այն կը կազմէր համախառն ներքին արդիւնքի 56,6 տոկոսը, այս տարեվերջին այդ ցուցանիշը պիտի հասնի 58,8

Աշտարակի Դպրոցներէն Մէկուն Մէջ Ուսուցիչները Դիմած Են Դասադուլի

Աշտարակի Վարդգէս Պետրոսեանի անուան դպրոցին մէջ անժամկէտ դասադուլ յայտարարուած է: Ուսուցիչներն ու աշակերտներու ծնողները կը պահանջեն, որ հիմնական նորոգուած անցեալ դարու 60-ական թուականներուն կառուցուած դպրոցին շէնքը:

Ծնողական խորհուրդի որոշմամբ ու ուսուցչական կազմի համաձայնութեամբ, աշակերտները դասերու պիտի չյաճախեն այնքան ժամանակ, քանի տակաւին չեն լուծուած անոնց պահանջները:

«Սանհանգոյց չկայ, պուֆէթ չկայ... տեսնում էք, էլի, սա 21-րդ դարի դպրոց չի կարելի համարել: Ի՞նչ են մտածում մեր մարզպետարանը, կրթութեան նախարարները: Իրանք կ'ուղարկեն իրանց էրեխեքին նման դպրոց», - «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ ըսած է ծնողներէն մէկը:

«Ես 21 տարի աշխատում եմ այս դպրոցում, 21 տարի խոստանում են... ու ոչ մի քայլ չի արուում», - աւելցուցած է ուսուցիչներէն մէկը:

Ռուսերէն Լեզուի Դասաւանդման Հայեցակարգ Մշակելու Յանձնարարական Չէ Տրուած

Վարչապետ Կարէն Կարապետեան լրագրողներու հետ զրոյցի ժամանակ ուշագրաւ յայտարարութեամբ հանդէս եկած է ըսելով, թէ ինք ուսերէն լեզուի դասաւանդման հայեցակարգ մշակելու յանձնարարական չէ տուած:

Լրագրողներու դիտարկման, թէ հայեցակարգին մէջ նշուած է, որ այն մշակուած է վարչապետի յանձնարարականով, Կարէն Կարապետեան արձագանգած է. - «Ես շատ պարզ ձեւակերպեցի՝ նման յանձնարարական չի եղել»:

Նշուած հայեցակարգը իրականակեցնելու նախագիծերու հրատարակման միասնական կայքէջին շրջանառութեան մէջ դրուած է 11 Սեպտեմբերէն: Փաստաթուղթին մէջ նշուած է, որ վարչապետին յանձնարարականով կրթութեան եւ գիտութեան նախարարութիւնը մշակած է դպրոցներուն մէջ ուսերէն լեզուի դասաւանդման հայեցակարգ, որ կը հռչակէ, թէ «Հայաստանի մէջ ուսերէնի ուսուցումը կարեւորագոյն խնդիրներէն է», որպէս նպատակ նշուած է «ուսաց լեզուի հանրայնացումը» եւ կ'ընդգծէ, որ «ուսերէնի ուսումնառութիւնը դպրոցներում սովորողներին եւ ուսանող-



Հայաստանի վարչապետ Կարէն Կարապետեան

ներին հնարաւորութիւն կը տայ ձեռք բերել գիտելիք ու հմտութիւններ՝ միմիանց հետ արդիւնաւէտ համագործակցելու համար»:

Պաշտօնական փաստաթուղթին համաձայն, ուսերէն լեզուի ազատ տիրապետումն անհրաժեշտ է արտադրութեան, գիտութեան, կրթութեան եւ մշակոյթի վերածնունդի ու զարգացման, ինչպէս նաեւ աշխարհատնտեսական եւ աշխարհաստիճանական մարտահրաւէրներու դիմագրուման հարցին մէջ համաշխարհային հանրութեան հետ Հայաստանի մասնակցութեան համար:

«Գարնան Եղանակէն Առաջ Քայլեր Սպասեցէ՛ք Ժառանգութիւննէն» . Ռաֆֆի Յովհաննիսեան

Յառաջիկայ ամիսներու ընթացքին «Ժառանգութիւնը» պայքար պիտի նախաձեռնէ, կանխելու համար Սերժ Սարգսեանի իշխանութեան վերարտադրութիւնը: Պատասխանելով «Ազատութեան» հարցին, կուսակցութեան առաջնորդ Ռաֆֆի Յովհաննիսեան յայտնած է, թէ այժմ ժողովուրդի տրամադրութիւնները կը շոշափեն եւ կ'աշխուժացնեն մարզային կառույցները:

«Եթէ ժողովուրդն այդ պահանջարկը ներկայացնի, եթէ ժողովուրդն ուզում է փոփոխութիւն, պատրաստ է նաեւ աքթիւ, նախաձեռնող քայլերի, ինչու չէ, մենք պէտք է հրապարակային, հանրային քայլերով ամէն ինչ անենք, որ տեղի չունենայ այդ մենիշխանութեան շարունակութիւնը: Մենք կարծում ենք, որ դա կործանարար կը լինի մեր ապագայի համար: Կարող էք գարնան ընդառաջ՝ «Ժառանգութիւն»-ից եւ ոչ միայն «Ժառանգութիւն»-ից սպասել աքթիւ նախաձեռնութիւններ», - ըսած է Ռաֆֆի Յովհաննիսեան:

Ամառուընէ տարբեր ուժերու հետ հանդիպումներ ունեցած «Ժառանգութիւն»ը դեռ պիտի փորձէ ընդդիմադիր լայն ճակատ ձեւաւորել. «Մենք պիտի շարունակենք



«Ժառանգութիւն»եան առաջնորդ Ռաֆֆի Յովհաննիսեան

առանց նախապայմանների կապն իրենց հետ, որպէսզի տեսնենք՝ մենք հնարաւորութիւն ունենա՞նք աշխարհային կամ տարեզրին Հայաստանի հանրութեանն առաջարկել մի նոր ձեւաչափ, նոր բովանդակութիւն, որը գոնէ կը նպաստի, որ մենիշխանութիւնը, կուսակցական իշխանութիւնը այսպէս չշարունակուի»:

Յովհաննիսեանի համոզմամբ, հակառակ պարագային արդէն ամիսներ անց՝ 2018-ի Ապրիլին, Հայաստան պիտի վերածուի մէկ անձի պետութեան:

Շարունակուած է Անդրիաս Ղուկասեանի Դատավարութիւնը

Քրէական ծանր մեղադրանքներով աւելի քան մէկ տարի է ի վեր անազատութեան մէջ գտնուող ընդդիմադիր գործիչ Անդրիաս Ղուկասեանի դատական նիստի ընթացքին պահանջած է վերծանել իր դէմ ցուցմունք տուած երկու վկաներուն՝ Արտակ Մկրտչեանին եւ Գեղամ Սահակեանին հեռաձայնային խօսակցութիւնները, քանի որ անոնք, ըստ ամբաստանեալին, կարեւոր հանգամանքներ պիտի բացայայտեն: Յիշեցնենք, որ Ղուկասեան կը մեղադրուի 2016-ի Յուլիսին Սարի թաղին մէջ զանգուածային անկարգութիւններ կազմակերպելու մէջ: Դատարանին մէջ ան պնդած է, որ վկայ Արտակ Մկրտչեան չէր կրնար լսել, թէ ինք իբրեւ թէ ոստիկաններուն հարուածելու համար քարեր հաւաքելու կոչ ուղղած է:

Ինչ կը վերաբերի գործով միւս վկայ՝ Գեղամ Սահակեանին, Անդրիաս Ղուկասեանին փաստաբանը Կարէն Մեթլումեան դատարանին մէջ ըսած է, թէ խոր կասկածներ ունի, որ վերջինս գործին մէջ յայտնուած է բացառապէս ոստիկանութեան շահերը պաշտպանելու համար:

ԼՈՒՐԵՐ

Փայլան.

«2009-ի Փաստաթուղթը Կարելոր է, Բայց Հարկաւոր է Նոր, Մաքուր Թուղթ Սկսիլ»

Թուրքիոյ խորհրդարանի հազարի պատգամաւոր, Ժողովուրդներու դեմոկրատական կուսակցութեան անդամ Կարո Փայլանի կարծիքով, Հայաստանի իշխանութիւնները պատրաստ են Թուրքիոյ հետ երկխօսութեան դուռը կրկին բանալ, սակայն Թուրքիա նոյնպէս պէտք է պատրաստ ըլլայ:



Հայազգի պատգամաւոր Կարո Փայլան

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան ՄԱԿ-ի ամպիոնէն օրերս յայտարարած էր, որ հայ-թրքական արձանագրութիւններու կենսագործման ուղղութեամբ դրական տեղաշարժի բացակայութեան պայմաններուն մէջ Հայաստան գանոնք առ ոչինչ պիտի յայտարարէ:

Փայլանի կարծիքով, արձանագրութիւնները կարելոր էին, սակայն այժմ ալ կարելի է սկսիլ ճերմակ թուղթէ. - «Էտուարտ Նալպանտեանին հետ հանդիպեցայ, պարոն վարչապետին հետ հանդիպեցայ, անկէ ետք ալ նախագահին հետ պիտի հանդիպիմ: Գիտեմ, որ անոնք պատրաստ են կրկին բանալ այս դուռը, բայց պէտք է, որ Թուրքիա նոյնպէս պատրաստ ըլլայ: Երբ Թուրքիա վերադառնամ, թուրք նախարարներու հետ պիտի խօսիմ, եւ այս դուռը քիչ մը բանալ պիտի ջանամ: 2009-ի փաստաթուղթը կարելոր է, բայց հարկաւոր է նոր, մաքուր թուղթէ սկսիլ»:

Երկխօսութիւնը վերսկսելու համար, սակայն, պէտք է ջանք թափել: Ըստ Փայլանի, Ժողովրդավարութեան վիճակը Թուրքիոյ մէջ վատթարացած է, ազգայնական տրամադրութիւնները՝ զգալիօրէն աճած: Վիճակը սրած է յատկապէս քրտական հարցի առնչութեամբ:

Մեկնաբանելով ուսուցիչական որոշակի մերձեցումը, Փայլան այս եւս կապած է քրտական հարցին հետ: Անոր խօսքով, մեծ խաղ կ'ընթանայ, որ արիւնալի իրադարձութիւններու կրնայ վերածուիլ - «Կրնամ ըսել, որ Ամերիկա աւելի քիւրտերուն հետ կը քայլէ, այդ պատճառով էրտողան կը ջանայ Ռուսիոյ հետ քայլել: Մենք՝ բոլոր հայերս պէտք է այս խաղին տեղեակ

ըլլանք: Պէտք է խելամիտ ըլլանք»:

Թուրքիոյ խորհրդարանի պատգամաւորին խօսքով, Ցեղասպանութենէն ետք արդէն քանիերորդ սերունդն է, որ կը սպասէ արդարութեան հաստատման: Եւ քանի որ միայն Ժողովրդավար Թուրքիան կրնայ աւերեսուիլ իր անցեալին հետ, բանալ հայ-թրքական սահմանը, պէտք է աշխատիլ Թուրքիան աւելի Ժողովրդավար դարձնելու ուղղութեամբ: Այն, ըստ անոր, աւելի ու աւելի բարդ կը դառնայ, քանի որ ազգայնական միտումները տարուէ տարի կ'աւելնան, նորանոր դրսեւորումներ կը ստանան, ինչպէս, օրինակ, խորհրդարանի մէջ «ցեղասպանութիւն» բառը կիրառելու արգելքը:

«Բառը կարելոր է: Եթէ մենք որեւէ ուղի գտնենք Թուրքիոյ մէջ եւ սկսինք խօսիլ, թէ ինչ եղած է 1915-ին, եթէ այն բառը գտնենք, որ միանաբար՝ թուրքերը, քիւրտերը, հայերս, համարենք, որ կ'արտացոլացնէ այն, ինչ որ տեղի ունեցած է, այդ պիտի ըլլայ այն բառը, որ պիտի արտասանուի Թուրքիոյ խորհրդարանին մէջ», - ըսած է Կարո Փայլան:

Փայլան անցեալ շաբաթ կը գտնուէր Հայաստան, ուր ան մասնակցեցաւ Հայաստան-Սփիլոք համաժողովին եւ Անկախութեան օրուայ տօնակատարութիւններուն:

Նալպանտեան Չէ Յստակեցուցած, Թէ Ո՞ր Տարածքները Յանձնելու Մասին Է Խօսքը



Հայաստանի ԱԳ Նախարար Էտուարտ Նալպանտեան

Սեպտեմբերին 18-ին Երեւանի մէջ կայացած Հայաստան-Սփիլոք Համաժողովի ժամանակ իր ունեցած ելոյթի ընթացքին, անդրադառնալով դարաբաղեան հարցին, Հայաստանի արտաքին գործոց նախարար Էտուարտ Նալպանտեան խօսած էր որոշ տարածքներ Ատրպէյճանին վերադարձնելու մասին: Նախարարի այդ խօսքը մեծ իրարանցում յառաջացուցած էր բնականաբար: «Խօսքը գնում է այն տարածքների վերադարձի մասին, որոնց վերադարձի դէպքում այս ամբողջ հիմնախնդրի կարգաւորմանը եւ անվտանգութեան համակարգին վնաս չի հասցուելու եւ սպառնալիքի տակ չի դնելու հանգուցալուծումը», ըսած էր Նալպանտեան:

Սեպտեմբեր 27-ին Արտաքին Գործոց նախարարութեան մէջ Բրիտանիոյ Եւրոպայի եւ Ամերիկաներու հարցերով պետական նախարար Ալէն Տանքնի հետ կայացած համատեղ ասուլիսի ժամանակ Նալպանտեանէն

խնդրուեցաւ պարզաբանել իր խօսքերը, թէ ո՞ր տարածքներ են, որոնց վերադարձումը պիտի չվտանգէ ու համակարգին վնաս պիտի չհասցնէ:

«Որոշ մէջբերումներ եւ մեկնաբանութիւններ կոնտեքստից դուրս էին հանուած, ինչպէս դուք էք հիմնականում, որովհետեւ դուք բերում էք ինչ-որ մի փոքրիկ մաս, իսկ մնացածի մասին չէք խօսում: Ես չեմ խօսել ինչ-որ բոնաբէթ տարածքների կամ միայն այս հարցի շուրջ, այլ խօսել եմ եռանախագահող երկրների նախագահների կողմից արուած հինգ յայտարարութիւններում պարունակուող երեք սկզբունքների եւ վեց տարրերի մասին: Դրանք հենց եռանախագահների բնորոշմամբ. մէկ ամբողջութիւն են ներկայացնում, եւ այդ սկզբունքները կամ այդ տարրերը մէկը միւսից տարանջատելն ընդհանրապէս անհնար կը դարձնի կարգաւորումը, որը Ատրպէյճանն է փորձում անել:

Բաբլոյեան. «Հայաստան Վրաստանէն Ղարաբաղի Հարցով Հաւասարակշռուած Դիրքորոշում Կ'ակնկալէ»

Հայաստանը մեծապէս կ'արժեւորէ Վրաստանի դերակատարութիւնը Հարաւային Կովկասի տարածաշրջանային անվտանգութեան հարցերուն մէջ եւ կ'ակնկալէ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգաւորման գործընթացին մէջ Վրաստանի հաւասարակշռուած դիրքորոշումը: Այս մասին յայտարարած է Ազգային Ժողովի նախագահ Արա Բաբլոյեան, Թիֆլիս կատարած պաշտօնական այցի ծիրին մէջ հանդիպելով Վրաստանի նախագահ Կիրիլի Մարկուելաշուիլիին հետ:



Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ Արա Բաբլոյեան

«Մեր պատկերացմամբ՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ կարգաւորումն այլընտրանք չունի: Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը, լինելով մարդու իրաւունքների խնդիր, կարող է լուծուել միայն Արցախի Ժողովրդի ազատ ինքնորոշման միջոցով», - Ազգային Ժողովի հանրային կապերու վարչութեան փոխանցմամբ, ըսած է Բաբլոյեան:

Հայաստանի խորհրդարանի խօսնակն ընդգծած է, որ Ատրպէյճանի կողմէ սանձազերծուած սպառնալիցութիւններու մրցավազը

լուրջ վտանգ է տարածաշրջանի բոլոր երկիրներուն համար:

«Մեր եղբայրական սիրտը կը ցաւի ատրպէյճանա-հայկական հակամարտութեան համար: Մէկ բան հաստատ է, որ մեզի՝ փոքր ազգերու համար այդպիսի հակամարտութիւնները կրնան կործանարար ըլլալ: Մենք կ'աղօթենք տարածաշրջանի խաղաղութեան համար», - յայտարարած է Վրաստանի նախագահը:

Սերժ Սարգսեան Ընդունած է ԱՄՆ Քոնկրէսականներու Պատուիրակուիւնը

Սերժ Սարգսեան ընդունած է ԱՄՆ քոնկրէսականներու պատուիրակութիւնը, որու կազմին մէջ են ինչպէս Հանրապետական, այնպէս ալ Դեմոկրատական կուսակցութիւններու ներկայացուցիչներ, Քոնկրէսի հայկական հարցերով յանձնախումբի համանախագահներ Ֆրանք Փայլոն եւ ձաքի Սփիլըր, քոնկրէսականներ Աննա Էշու, Թուլսի Կապրոս եւ ձիմ Սենսենպըրը:

Նշելով, որ ԱՄՆ Քոնկրէսի երկկուսակցական պատուիրակութեան այցը Հայաստան կը վկայէ այն մասին, որ ԱՄՆ-Հայաստան յարաբերութիւններու զարգացման եւ խորացման հարցին մէջ Հայաստանն աջակիցներ եւ բարեկամներ ունի թէ՛ հանրապետականներու եւ թէ՛ դեմոկրատներու շարքերուն մէջ,

Սերժ Սարգսեան խորհրդանշական համարած է, որ ԱՄՆ քոնկրէսականներն այցելած են Հայաստան երկու երկիրներու միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման յրբեւեանական՝ 25-րդ տարին: Այս մասին նշուած է նախագահի կայքէջին տեղադրուած հաղորդագրութեան մէջ:

ԱՄՆ քոնկրէսականներն, իրենց հերթին, նշած են, որ ուրախ են Անկախութեան տօնին օրը Հայաստան գտնուելու եւ տօնը հայ Ժողովուրդին հետ միասին նշելու հնարաւորութեան համար: Քոնկրէսականներն իրենց պատրաստակամութիւնը յայտնած են ջանքեր գործադրելու հայ-ամերիկեան յարաբերութիւններու յետագայ ընդլայնման ու խորացման ուղղութեամբ:

Սպահանի Հայոց Թեմի Խորհուրդի Ատենապետը Յարձակման Ենթարկուած Է

Ուրբաթ, 22 Սեպտեմբերին, երբ Հայաստանէն Նոր Զուղա կը ժամանէր Հայաստան-Սփիւռք համահայկական խորհրդաժողովին մասնակցած Սպահանի Հայոց Թեմի պատուիրակութիւնը, Թեմական Խորհուրդի ատենապետ Վարուժ Մինասեան երեկոյեան ժամը 10-ի կողմերը իր բնակարանի մուտքին առջեւ շարձակման ենթարկուած էանյայտ անձերու կողմէ, որոնք մահակով եւ սուր զէնքով վիրաւորած են զինքեւ փախուստի դիմած:



Սպահանի Թեմական Խորհուրդի ատենապետ Վարուժ Մինասեան

Սպահանի Հայոց Թեմի ազգային առաջնորդարանի դիւանի հաղորդագրութեան համաձայն, Մինասեանը տուն տեղափոխող ինքնաշարժին մէջ գտնուած է նաեւ Թեմի առաջնորդ Սիփան Ծայրագոյն վարդապետ Քեչէճեան, սակայն ան եւ վարորդը շարձակման թիրախ չեն դարձած, եւանոնց ու ինքնաշարժիորեւէ վնաս չէ պատճառուած:

Մինասեան անմիջապէս տեղափոխուած է հիւանդանոց, ուր անոր բժշկական օգնութիւն ցուցաբերած են: Անոր առողջական վիճակն այժմ գոհացուցիչ է, ան երէկ

դուրս գրուած է հիւանդանոցէն: Դէպքին առթիւ յարուցուած է քրէական գործ եւ քննութիւն կ'ընթանայ պատկան մարմիններու կողմէ, որոնք, ըստ հաղորդագրութեան, որոշ բացայայտուներ կատարած են, սակայն տակաւին գանոնք չեն հրապարակեր: Սպահանի Հայոց Թեմը դատապարտած է այս յանցագործութիւնը:

Էրտողանի Ամերիկեան Այցը Կրկին Ուղեկցած Է Ծեծկռտուքով

Թուրքիոյ նախագահ Էրտողանի հերթական այցը Միացեալ Նահանգներ կրկին անգամ ուղեկցած է ծեծկռտուքով:



«Marriot Marquis» հիւրանոցի սրահին մէջ ծեծկռտուք

Նիւ Եորքի կեդրոնը գտնուող «Marriot Marquis» հիւրանոցի սրահներէն մէկուն մէջ խումբ մը ցուցարարներ փորձած են խափանել Էրտողանի ելոյթը, սակայն Թուրքիոյ նախագահի կողմնակիցները կանխած են այն:

Համացանցի էջերուն վրայ յայտնուած տեսագրութեան մը մէջ յստակ կերպով կ'երեւի, թէ ինչպէս Էրտողանի կողմնակիցները ծեծի կ'ենթարկեն անվտանգութեան ծառայութեան աշխատակիցներու կողմէ սրահէն դուրս բերուող ցուցարարները: Այս բոլորին կը հետեւէր ինք՝ Թուրքիոյ նախագահը, պարբերաբար իր աջակիցներուն հանդարտութեան կոչեր ուղղելով:

«Այս գործողութեան նպատակը Թուրքիոյ» կողմէ քիւրտերուն հանդէպ իրականացուող ուղեւորական յանցագործութիւններու եւ մարդու իրաւունքներու խախտումներու վրայ հանրութեան ուշադրութիւնը սեւեռելն էր», - «New York Times»-ի հետ գրոյցի ժամանակ նշած է ցոյցի վեց մասնակիցներէն մէկը՝ Մեկան Պոտէթ:

Յիշեցնելով Մալիսին Ուաշինկթընի մէջ տեղի ունեցած ծեծկռտուքին մասին, Միացեալ Նահանգներու Պետական Քարտուղարութիւնը դէպքէն քանի մը ժամ ետք, յայտարարութիւն տարածած է, ուր մասնաւորաբար նշուած է. «Այս անգամ, ըստ ամենայնի, թրջական անվտանգութեան ծառայութեան աշխատակիցները դէպքին ներքաշուած չեն եղած»:

Սարգսեան Ժամկետ Տուած Է Անգարային

Շարունակուած էջ 1-էն

յաստանի նախագահը: «Կարգաւորման ինչ տարբերակի էլ չանգենք, միեւնոյն է, Արցախի Հանրապետութիւնը չի կարող ունենալ աւելի ցածր կարգավիճակ եւ վայելել աւելի քիչ ազատութիւն, քան այսօր ունի: Ատրպէյճանը պէտք է ճանաչի եւ յարգի Արցախի ժողովրդի կողմ

մից իր ապագան ազատ կամքի արտայայտութեամբ որոշելու իրաւունքը, իսկ արցախահայութեան անվտանգութիւնը պէտք է երաշխաւորուած լինի բոլոր հնարաւոր միջազգային եւ ներքին մեխանիզմներով»:

Միջազգային խնդիրներէն Սերժ Սարգսեան անդրադարձած է միայն սուրիական ճգնաժամին, առաջին անգամ պաշտօնապէս

Չինաստանի Տնտեսական Սեղմումները Հիւսիսային Քորէայի Նկատմամբ

Հիւսիսային Քորէայի հիւլէական եւ ջրածնային ռումբերու եւ հեռարձակ հրթիռներու սպառնալիքները խոր գայլոյթ յառաջացուցած են բովանդակ աշխարհի եւ դրացի երկիրներու մօտ: Այդ չափանշաններու առաջը առնելու եւ վտանգաւոր նախաձեռնութիւններու արգելք հանդիսանալու միտումով ՄԱԿը որոշեց տնտեսական նոր սեղմումներու ենթարկել Հիւսիսային Քորէան:

Պէյճինկէն ստացուած հաւաստի լուրերու համաձայն Չինաստանի կառավարութիւնն ալ իր հերթին շուտով պիտի սկսի նոր սեղմումներու ենթարկել քարիւղի արտածումները փոփոխելով իր դաշնակիցին հանդէպ:

Արդարեւ, ըստ Չինաստանի այս սահմանափակումներուն նպատակն է ընդառաջել ՄԱԿի որոշումներուն եւ արգելել Հիւսիսային Քորէայի աթոճակաւի եւ հրթիռակաւի տեղեւոր: Նշուած քարիւղային արտածումներուն կարգին, պիտի սահմանափակուին նաեւ թեքստիլ արտածումներն ալ, որոնք պիտի գործադրուին յառաջիկայ Յունուարի 1էն սկսեալ:

Նշենք նմանապէս որ անցնող տասնեակ տարիներու ընթացքին Չինաստան, առեւտրական գետնի վրայ մեծագոյն դաշնակիցը եղած է Հիւսիսային Քորէայի, շուրջ 90 առ հարիւր համեմատութեամբ:

Global Times-ի համաձայն եթէ Չինաստան լրիւ դադրեցնէ իր քարիւղի արտածումը դէպի Հիւսիսային Քորէա եւ սահմաններն ալ փակէ, այդ պարագային անտարակոյս փոփոխութիւններ կ'ընդհանրուին Հիւլէական փորձերն ու հրթիռներու արձակումները: Յամենայն դէպս առճակատում մըն ալ նախատեսելի է երկու երկիրներու միջեւ:

Վերոյիշեալ հարցի կապակցութեամբ անցեալ Հինգշաբթի ԱՄՆ-ի նախագահ Թրամը նոր սահմանափակումներ յայտարարեց Հիւսիսային Քորէայի նկատմամբ, ի մտի ունենալով ընկերութիւններն ու անձնական նախաձեռնողները: «Ֆրանս ֓րէս» տեղեկատու գործակալութեան համաձայն փոփոխութեան մէջ քարիւղի գիները բարձրացած են 20 տոկոսով:

Իր հերթին Հիւսիսային Քորէայի արտաքին գործոց նախարար Ռի Եօնկ Հօ զգուշացուցած է ըսելով որ իր երկիրը կրնայ մօտ ատենէն ջրածնային ռումբի փորձարկութիւն մը կատարել իսրայէլական Ուկրաինային մէջ: Այս յայտարարութեան որպէս յաւելում ան ըսած է նաեւ «Չենք գիտեր թէ ինչպիսի գործողութիւններու հրահանգ պիտի տրուի առաջնորդ Քիմ ձոնկ Ունի կողմէ» կը տեղեկացնէ Հարաւային Քորէայի Եոնհաբ լրատու գործակալութիւնը:

Փորթո Ռիգոյի Ահաւոր Մորիկի Վնասները

Փորթո Ռիգոյի մայրաքաղաք Սան Խուանէն ստացուած վերջին տեղեկութեանց համաձայն «Մարիա» կոչուող մորիկն ահաւոր վնասներ պատճառած է կղզիի բովանդակ բնակչութեան: Նախապէս օրեր առաջ «Իրմա» մորիկն ալ իր աւերները գործած էր թէ ֓րթո Ռիգոյի եւ թէ Գարիպլն կղզիներուն, պատճառ հանդիսանալով 27 հոգիներու մահուան: Ահաւոր մորիկի հետեւանքով ընդմիջուած է ելեկտրական հոսանքը: Պաշտօնական հաղորդագրութեան մը համաձայն կղզիի բնակչութեան հեռախօսներու 95 առ հարիւրը անգործածելի դարձած է:

Արդարեւ, մորիկի կանխագուշակումէն անմիջապէս ետք 3700 ԱՄՆ-ի դաշնակցային պաշտօնեա-

ներ կղզի ժամանած են շտապ օգնութեան համար: Հեղեղանման անձրեւներ, հողային սահանքներ եւ այլ կլիմայական պատուհաններ վտանգած են նաեւ ծովային եւ օդային երթեւեկութիւնները, ամենուրեք ստեղծելով անապահով վիճակ:

Փորթո Ռիգոյի Հիւսիս Արեւմուտքը գտնուող Չուրի ամբարտակը փլուզման ենթակայ ըլլալով, տասնեակ հազարաւոր մօտակայ շրջաններու բնակիչներ տեղափոխուած են: Արդարեւ մայրաքաղաքէն 70 մղոն հեռաւորութեան վրայ գտնուող Գուալաթապ ամբարտակը կառուցուած էր 1928 թուականին: Ան ուղեւորներու եւ ըմպելի ջուր կը հայթայթէր բազմաթիւ շրջաններու:

հաստատելով, որ հայաշատ այդ երկիր մարդասիրական օգնութիւն ուղարկելէն բացի պաշտօնական երեւան պատրաստ է քննարկել նաեւ Սուրիոյ մէջ խաղաղարար ջանքեր ձեռնարկելու հնարաւորութիւնը ՄԱԿ-ի հովանիին ներքոյ եւ համապատասխան մանդատով: Ներքին օրակարգին անդրադառնալով նշած է, որ Հայաստան պատրաստ է յառաջիկայ Նոյեմբերին ա'լ աւելի սերտացնել յարաբերութիւնները Եւրոմիութեան հետ, մնալով Քրեմլինի նախաձեռնած Եւրասիական միութեան կազմին մէջ:

«Հայաստանն այսօր Եւրասիական տնտեսական միութեան արթնացում է եւ իր շահագրգիռ մասնակցութեամբ փորձում է նպաստել տնտեսական խոշոր այդ տարածքում ապրանքների ու ծառայութիւնների անարգել տեղաշարժի ճանապարհով մարդկանց համար աւելի շատ բարիք

ստեղծելու ջանքերի խթանմանը: Դրական արդիւնքներ արդէն իսկ ունենք, ինչն ապագայի լաւ յոյսեր է ներշնչում: Մենք նաեւ ծրագրում ենք Նոյեմբեր ամսին Եւրամիութեան հետ ստորագրել Համաձայնագիր համապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան մասին, որը, մեր համոզմամբ, կ'օգնի մեզ նոր թափ հաղորդել Հայաստանում իրականացուող ինստիտուցիոնալ բարեփոխումներին», - ՄԱԿ-ի ամպիոնէն յայտարարած է Հայաստանի նախագահը:

Եզրափակելով ելոյթը, Սերժ Սարգսեան հաւաստիացուցած է, որ բնական հարուստ պաշարներ ու դէպի ծով ելք չունեցող Հայաստանի համար ամենամեծ արժէքը մարդն է, կոչ ուղղելով ՄԱԿ-ի մէջ նոյնպէս ամէն բանի կեդրոնը պահել մարդն ու ձգտել խաղաղ ու արժանապատիւ կեանք ապահովել բոլորին համար:

Հայաստան-Սփիւռք Համահայկական Համաժողովի Ամփոփիչ Յայտարարութիւնը

Հայաստան-Սփիւռք համահայկական 6-րդ համաժողովի մասնակիցները համատեղ յայտարարութիւն հրատարակած են:

«Մենք՝ Հայաստանի առաջին Հանրապետութեան հռչակման, 1918թ. մայիսեան հերոսամարտերի 100-ամեայ յրեւելանների եւ Երեւանի հիմնադրման 2800-ամեակի նախաշեմին Երեւանում գումարուած «Փոխադարձ վստահութիւն, միասնականութիւն եւ պատասխանատուութիւն» խորագրով Հայաստան-Սփիւռք 6-րդ համաժողովի մասնակիցներս՝

Առաջնորդուելով Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիասնութեան ամրապնդման գործում ողջ հայութեան ներուժի համախմբման, շարունակական երկխօսութեան եւ բազմաշերտ ներգրաւման հրամայականով,

Կարեւորելով ազգային նպատակադրումների համատեղ ամրագրումը, դրանց կենսագործման համար ծրագրերի մշակումը, տարբեր միջոցներով իւրաքանչիւրի մասնակցութեան համար հնարաւորութեան ընձեռումը եւ արդիւնքների համար հայութեան համահաւաք պատասխանատուութեան գիտակցումը,

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետութեան, Արցախի Հանրապետութեան հզօրացումը եւ անվտանգութեան ամրապնդումը, ժողովրդավարական հաստատութիւնների ու կառավարման համակարգերի առաւել ուժեղացումը, տնտեսական վերընթաց զարգացումը, ժողովրդի կենսամակարդակի բարձրացումը, հոգեւոր, կրթական ու մշակութային առաջընթացը, աշխարհասփիւռ հայկական համայնքներում ազգային ինքնութեան պահպանութիւնը եւ մշակութային զարգացումը Հայաստան-Արցախ-Սփիւռք միասնութեան եւ ողջ հայ ժողովրդի հաւաքական նպատակների իրականացման գրաւականն են,

Կենսական նկատելով ազգային ինքնութեան պահպանման գործում հոգեւոր, բարոյական աւանդական արժէքների շուրջ համախմբումը, հայ ընտանիքի ամրապնդումը եւ ծնելիութեան աճի խթանումը,

Վերահաստատելով մեր համազգային պատասխանատուութիւնն Արցախի ժողովրդի՝ սեփական ճակատագիրն ազատ տնօրինելու անքակտելի իրաւունքի իրացման, ժողովրդավարութեան զարգացման եւ միջազգային հանրութեանը լիիրաւ ինտեգրման հար-

ցերում,

Գիտակցելով Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի առջեւ առկայ եւ հնարաւոր նոր մարտահրաւրներին միասնաբար՝ պետութեան, հայեկեղեցու, համահայկական կառույցների եւ համայնքային կազմակերպութիւնների ջանքերի համադրմամբ արձագանգելու եւ համահայկական խնդիրները համատեղ ուժերով լուծելու անհրաժեշտութիւնը,

Համոզուած լինելով, որ փոփոխուող աշխարհում Սփիւռքի համայնքների տինամիք զարգացումը հնարաւորութիւն է տալիս նորովի մասնակցութիւն բերելու Հայաստանի եւ Արցախի տնտեսական ու մշակութային զարգացմանը՝ այդպիսով նպաստելով հզօր հայրենիքի կառուցմանը,

Փաստելով, որ Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութիւնում ամրագրուած է հայապահպանմանն ուղղուած քաղաքականութիւն վարելու եւ հայրենադարձութեանը համակողմանիօրէն նպաստելու պետութեան առաքելութիւնը, որը նոր որակ եւ բովանդակութիւն է հաղորդելու Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւններին,

Հաւատելով, որ իր իրաւունքների պաշտպանութեան ու արդարութեան վերականգնման համար հայութեան պայքարը հիմնուած է համամարդկային արժէքների վրայ եւ հանդիսանում է մեր համազգային գործակցութեան առանցքային ուղենիշներէ մէկը,

Ողջունելով Համահայկական խորհրդի՝ որպէս համազգային առաջնահերթութիւնների ճշգրտման եւ բարձր մակարդակի ռազմավարական երկխօսութեան հարթակի ձեւաւորման գործընթացը,

Հաւատարիմ մնալով Հայոց Յեղասպանութեան 100-րդ տարելիցի Համահայկական հռչակագրի սկզբունքներին,

Վերահաստատում ենք մեր պատրաստակամութիւնը՝ միասնաբար եւ փոխադարձ պատասխանատուութեամբ, մարդկային, նիւթական եւ հոգեւոր ներուժի համախմբմամբ առաւել ամրապնդել Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիասնութիւնը՝ այն ուղղորդելով հետեւեալ նպատակները եւ խնդիրների իրագործմանը.

Հայաստանի Հանրապետութեան, Արցախի Հանրապետութեան հզօրացմանը, անվտանգութեան ամրապնդմանը, բարգաւաճմանը, աշխարհասփիւռ հայկական համայնք-

ների համախմբմանը, ազգային ինքնութեան պահպանմանը, ինչպէս նաեւ հայրենադարձութեան քաջալերմանը,

Ղարաբաղեան հիմնախնդրի խաղաղ եւ արդարացի հանգուցալուծմանը, Արցախի ժողովրդի ինքնորոշման իրաւունքի իրականացման միջազգային ճանաչմանը,

Օսմանեան կայսրութեան եւ Թուրքիայի տարբեր վարչակարգերի կողմից պետականօրէն ծրագրուած եւ իրագործուած Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչման, դատապարտման եւ դրա հետեւանքների վերացման ուղղութեամբ առաւել համակարգուած եւ միասնական քաղաքականութեան իրականացմանը, ցեղասպանութիւնների եւ մարդկութեան դէմ ուղղուած յանցագործութիւնների կանխարգելման նպատակով միջազգային հանրութեան պայքարի առաջնագծում հաստատուն դիրքի պահպանմանը՝ այդ համարելով որպէս ցեղասպանութիւն վերապրած ժողովրդի՝ համամարդկային արժէքների եւ միջազգային իրաւունքի վրայ խարսխուած բարոյական պարտք ողջ միջազգային հանրութեան առջեւ,

Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչմանն ուղղուած գործընթացում իրազեկուածութեան առաւել բարձրացմանը, պատմական յիշողութեան պահպանմանն ու փոխանցման կարեւորմանը եւ այդ յանցագործութեան ժխտման, նսեմացման դէմ պայքարի իրականացմանը՝ այդ թուում իրաւունքի ուժով,

Հայաստանի պաշտպանութեան ամրապնդմանը, գինուած ուժերի ռազմատեխնիկական, տեխնոլոգիական եւ մասնագիտական ներուժի արդիականացմանը, ռազմարդիւնաբերական համալիրի զարգացմանը՝ որպէս տնտեսութեան զարգացման եւ տեխնոլոգիական առաջընթացի շարժիչ ուժ եւ «Ազգային» հայեցակարգի կենսագործման առանցքային ուղղութիւն,

Աշխարհի տեղեկատուական տարբեր հարթակներում հայատեսացութեան եւ հակահայ քարոզչութեան փորձերի դէմ միասնական պայքար ծաւալելու եւ նման քաղաքականութեան ազդեցութեան չէզոքացմանն ուղղութեամբ գործնական ծրագրերի եւ համակարգուած գործունէութեան շարունակական իրականացմանը,

Երիտասարդութեան շրջանում ազգային ինքնութեան հաւաքական որակների տարածմանն ու ամրապնդմանը, հայ դպրոցի գո-



րացմանը, հայ սերունդներին հայկականութեան ոգով դաստիարակմանը, հայցեցի կրթութեան գործում ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանը, հայրենաճանաչութեան նոր ծրագրերի մշակմանն ու իրականացմանը,

Հայութեան մէջ սիրոյ, համերաշխութեան, հանդուրժողականութեան ամրապնդմանը, հայ մարդու անվտանգ ու արժանապատիւ կեանքի համար բարենպաստ միջավայրի ապահովմանը,

Հայկական համայնքների առջեւ ծառայած մարտահրաւրների դիմագրաւմանն ու յաղթահարմանն ու հնարաւոր այլ մարտահրաւրների բացառացումն ուղղութեամբ ջանքերի համադրմանը,

Մերձաւոր Արեւելքի եւ, մասնաւորապէս, ծանր փորձութիւնների միջով անցնող Սիրիայի հայութեանը համակողմանի աջակցութեան ցուցաբերմանը, այդ տարածաշրջանում հայկական հաստատութիւնների, պատմամշակութային կոթողների եւ մշակութային արժէքների պահպանմանը,

Հայաստանի, Արցախի բնակավայրերի (յատկապէս՝ սահմանամերձ) կենսագործունէութեան տարբեր ոլորտների զարգացմանն ուղղուած ծրագրերի մշակմանը եւ իրականացմանը,

Հայաստանի եւ Արցախի վերաբերեալ միջազգային իրազեկուածութեան բարձրացմանը, այդ նպատակով համահայկական օրակարգի ձեւաւորմանը եւ դրա լուծմանն ուղղութիւններով միասնական քաղաքականութեան մշակմանը եւ իրականացմանը՝ նոր եւ աւանդական կառույցների միջոցով,

Տարբեր երկրներում հայկական պատմամշակութային ժառանգութիւնը պահպանելու, աշխարհում հայկական մշակութիւնը պատշաճ կերպով ներկայացնելու, հայ-

Շար.ը էջ 19



MARONIAN
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served our community's insurance needs.

CA Insurance Lic. #0C99815



WELCOME HOME & AUTO INSURANCE

Along with all of our other *Trusted Insurance Services*






We will shop you with over 20 A-rated companies to find the best fit for your needs and budget.

CALL US FOR A PERSONALIZED QUOTE

(818) 500 9305

Արտակարգ Իրավիճակի Մէջ Գտնուող Սփիւռքի Առեղծուածը Սփիւռք Թէ Գաղթածախ Ի՞նչ Է Ելքը

Զաւէն ԽԱՆՃԵԱՆԻ Խօսքը Հայաստան-Սփիւռք Համագործակցութեան Ընթացքին

ԶԱՒԵՆ ԽԱՆՃԵԱՆ

Բացատրական: Իմ կարծիքս է թէ Մերձաւոր Արեւելքի մեր յետ եղեռնեան գաղութները կ'ուղղուին դիմագրաւելու Սփիւռք թէ գաղթօճախի առեղծուածը իսկ Եւրոպական յետ անկախութիւն, սփիւռք դառնալու թեկնածու նոր գաղութները արդէն կ'ապրին այդ առեղծուածը:

Իմ ներկայացումը եւ եզրակացումը հիմնուած է Սուրիահայերի շրջանում փորձառութեան վրայ:

Մարդկային պատմութեան հոլովոյթին եւ ազգերու, ժողովուրդներու եւ երկիրներու կազմաւորման մէջ մեծ եւ շարունակական դեր խաղացած են բնակչութեան բուն կամ կամայաւոր գաղթը:

Հալածանքներու որպէս արդիւնք եւ կամ «մեղրի եւ կաթի» հովիտներու մշտական փնտրումներին մէջ մարդկային գանգաւորներ տեղափոխուած են երկիր կոչուող այս արբանեակին մէկ ծայրէն միւսը:

Մարդկային գանգաւորութեան արդիւնք եղող պատերազմներ եւ այլ քաղաքական, տնտեսական կամ կրօնական արդի հալածանքներ տակաւին պատճառ են նոր գաղթերու երեւոյթին:

Հայ ժողովուրդն ալ իր հազարամեայ պատմութեան ընթացքին նմանօրինակ պատճառներով, ենթարկուելով իր շուրջ գտնուող աւելի հզօր ուժերու ասպատակումին եւ անողք պարտադրանքին արմատախիլ ըլլալով իր պայքենական օրրանէն տարածուած եւ սփռուած էր հին աշխարհի - Մերձաւոր Արեւելքի, Կովկասի եւ այլուր գանազան անկիւններու մէջ կազմած ըլլալով գաղթավայրեր: (Եւ այդպիսով ընդհանրապէս կորսուած: Ահա մեր, հակառակ մեր հազարամեայ գոյութեան, այսօրուայ փոքր քանակը):

1915-1928 երկարող ժամանակաշրջանին, Երիտասարդ Թուրքերով սկսած եւ Քեմալական Թուրքիոյ երթով շարունակուած 20-րդ դարու առաջին ցեղասպանութեան որպէս արդիւնք ստեղծուեցաւ, այլեւս մեզի ծանօթ հայկական Սփիւռքը, սկսած մեր պատմական հայրենիքի սահմանակից արաբական երկիրներէ եւ ժամանակի ընթացքին ծաւալած մինչեւ Ամերիկաներն ու Աւստրալիաները:

«Սփիւռք» Յունարէնով Diaspora-ն է որ կը նշանակէ սփռում կամ տարածում: Այսպէս կը կոչուին իրենց բնօրրաններէն դուրս բնակող ժողովուրդներու այն գանգաւորները որոնք, եւ այս խիստ կարեւոր է սահմանումին մէջ, կը շարունակեն գիտակից հաստատումով մը պահպանել եւ զարգացնել իրենց ինքնուրոյն ազգային դիմագիծը: Եւ ահա այս է տարբերութիւնը սփիւռքի եւ գաղթավայրի միջեւ:

Սփիւռքը ինքնանպատակ չէ: Սփիւռք մը դիմանալու, իր ազգային դիմագիծը պահպանելու եւ զարգացնելու համար կարօտ է այն աւելին եւ աւելին որ իր գոյութեան գրաւակաւն ու հրամայականն է եւ կրնայ գալ միայն ու միայն բաղձալի հայրենիքի մը հետ իր ունեցած սերտ կապերէն:

Գաղթօճախները կը խամրին, կը թօշնին, կը գունատին եւ ժամանակի ընթացքին կը դառնան

«Աստ Հանգչի»:

Սփիւռքը ետուն է: Աննպաստ պայմաններու մէջ իսկ, հեռու արմատէն, այնտեղ կ'ապրին ու կը ծաղկին լեզուն ու մշակոյթը, երգն ու երաժշտութիւնը, գիրն ու գրականութիւնը միշտ սակայն ձգտելով հայրենադարձութեան եւ երազելով տունդարձը:

Այդպէս էր արաբական աշխարհի հայկական Սփիւռքը: Այդպէս էին Սուրիան եւ Լիբանանը, Եգիպտոսն ու Պաղեստինը, Իրաքն ու Յորդանանը:

Այդպէս էին եւ մնացին Մեծ Եղեռնէն ետք կէս դարէ աւելի մինչեւ քսաներորդ դարու գրեթէ վերջին քառորդը:

Երկրորդ Պատերազմի աւարտէն սկսեալ Միջին Արեւելքի մէջ իսրայելի ստեղծումը, ծաւալումը եւ գոյութիւնը եկաւ խախտել արաբական նորանկախ երկիրներու անփորձարու, երբեմն փառասէր եւ շահախնդիր կամ օտարի ենթակայ ղեկավարներու իշխանութեան տակ գտնուող արաբական երկիրներու քաղաքական, տնտեսական եւ ընկերային անդորութիւնն ու խաղաղութիւնը:

Որպէս արդիւնք այս վիճակին, առաւել Լիբանանեան քաղաքացիական դաժան պատերազմին, գումարած Արաբական Մոցի մէջ քարիւղի չափանաբերման աւետումով նորածիլ իշխանութիւններու տնտեսական զարգացման, Միջին Արեւելքի հայկական Սփիւռքը սկսաւ ականատես ըլլալ նոր ծաւալային եւ շրջանային խախտումներու եւ տեղափոխութիւններու:

Եւ կարգով հայաթափ եղան գանազան տոկոսներով եւ վերելքի շուած տարբեր պատճառներով՝ Եգիպտոսի, Պաղեստինի, Յորդանանի, Լիբանանի եւ Իրաքի գաղութները:

Արտակարգ իրավիճակի մէջ գտնուող վերջին զոհը եւ մեր այս խորհուրդներուն կիզակէտը Սուրիան է:

Սփիւռք մը պահպանելու, անոր զարգացումին, հզօրութեան եւ գոյատեւումի ներոյժը կարիքը ունի հետեւեալ ազգակներուն:

- Ազգապահպանման գծով անարգել մթնոլորտ - լեզու, մշակոյթ
- Կրօնքի եւ հաւատքի գծով անարգել մթնոլորտ
- Տնտեսական զարգացման ատակ առիթ - opportunity - եւ մթնոլորտ
- Քաղաքական կայուն մթնոլորտ
- Կեանքի, գոյքի եւ կալուածի ապահովութիւն

Սուրիահայ գաղութը վերոյիշեալ պայմանները ընդհանրապէս վայելող վիճակի մը մէջ կը գտնուէր յատկապէս 1970-ի Ասատեան իշխանութեան հաստատումէն ի վեր:

Սուրիահայ գաղութը արմատացած, խարսխուած, չաջող, կենսունակ եւ կրօնական հովանիի տակ՝ ազգային բարձրորակ անկախութեամբ օժտուած գաղութ մըն էր:

Անոր ընձեռնուած վստահութիւնը, համակրանքը, ազատութիւնը եւ կրթական, տնտեսական եւ նախաձեռնական պատհոյթիւնները աննախատիպ են Սուրիական հայրենիքի մէջ եւ անոր իշխանութիւններու կողմէ:

Մօտ հինգ տարիէ ի վեր, «արաբական գարուն» կոչուած պատրանքին տակ, մութ նկուղներու մէջ ծրագրուած ճիւղաճիւղի դաւադրութիւն մը՝ ներքին ճակատի վրայ առատապէս վարձատրուած դժխեմ ոճրագործներու ձեռքով եւ սահմանակից երկիրներէ փախցուած վարձկաններով եւ գինամթերքով յաջողեցաւ խախտել 40 տարիներու վրայ երկարած նախանձելի խաղաղութիւնը՝ քաղաքակրթութեան օրրան, արաբական ազգայնականութեան խարխիս՝ Սուրիական աշխարհը:

Այս բոլորին արդիւնք՝ Սուրիահայ գաղութը այսօր արմատապէս խախտած է: Սփիւռքի մը գոյատեւման վերոյիշեալ ազգակները անապահով են:

Ու տակաւին «Ղրհեղերը ուռմբերուն» վերջ գտած չէ եւ ոչ ալ Միջին Արեւելքի հետ աւերչութիւն ունեցող ծաւալուն ծրագիրը ամբողջացած:

Հինգ տարիէ ի վեր Սփիւռքահայութեան գոյութեան սպառնացող յետ եղեռնեան ամենամեծ Ազգային աղէտը թէեւ մեղմացած կարելի է սեպել բաց վնասը անգնահատելի է: Պատիւ տազնապի պատնէշի վրայ հաստատ մնացող գանգաւորներ եւ անոր հերոս ղեկավարութեան:

Սուրիահայութեան տագնապին, Սփիւռքահայ Մայր Գաղութի անդամահատումին եւ Սուրիահայ հոծ գաղթականներու անյոյս եւ անմխիթար վիճակին՝ մենք հաւաքաբար ուշ անդրադարձանք եւ հարկ եղած լրջութեամբ չմտեցանք:



Հայկազուն Արքեպիսկոպոս Պոմպէյ կը հասնէր Մայիսին եւ կ'առաջնորդուէր հայոց Ս. Պետրոս եկեղեցին, եւ շուտով կ'անցնէր Քոթայած մասնակցելու համար յանուն Ամենայն Հայոց կաթողիկոսին Մալապար եկեղեցւոյ նորընտիր Պասիլիոս Ուզեն Գ. կաթողիկոսի գահակալութեան: Պոմպէյ վերադարձին Հայկազուն Արքեպիսկոպոս պատարագ կը մատուցանէր 1963-ին կառուցուած նորաշէն Ս. Պետրոս եկեղեցւոյ մէջ, ուր կը կարդացուէր Հայրապետական կոնդակը: Սրբազանը Հնդկաստանի հայ համայնքին առաջին Ընդհանուր Ծիսական Ժողովը գումարել կուտար «ուր բարեփոխութեան ենթարկուեցաւ հին կանոնադրութիւնը» ներմուծելով որոշ յօդ-

ուածներ որոնց ուժով համայնքն ու եկեղեցին «Մայր Աթոռ Ս. էջմիածնի իշխանութեան եւ իրաւասութեան ենթակայ համայնք կը դառնային»:

Նոյնպէս կաթողիկոսական Պատուիրակի կարգադրութեամբ կանոնի անցաւ այն յօդուածը որուն շնորհիւ համայնքին հոգեւոր հովիւը պէտք էր ի պաշտօնէ մասնակցէր ծիսական ժողովներուն որպէս նախագահ եւ ձայն ունենար համայնքի ազգային-եկեղեցական գործերուն մէջ: Հայրապետական Պատուիրակ Սրբազանը այստեղ նկատի ունէր մեր վերեւ յիշած Կիլիկեան Աթոռի անկանոն ոսնձգութիւնները:



Նազարեթայ Սուրբ Եկեղեցի, Կալկաթա

Կալկաթա

Հայկազուն Արքեպիսկոպոսի յաջորդ կայքը պիտի ըլլար Կալկաթա, ուր կը հասնէր Յունիսի առաջին շաբթուն եւ կը դիմաւորուէր Երուսաղէմի երիտասարդ միաբան եւ իր նախկին աշակերտներէն Գեղամ արեղայ Զաքարեանի եւ եկեղեցական վարչական անդամներուն կողմէ: Ներկայիս Գեղամ Մ. Վարդապետ Զաքարեան, Երուսաղէմի միաբանութեան երիցագոյն անդամներէն է եւ հաւատարմօրէն կը ծառայէ Ս. Աթոռին: Առաջնորդուելով Նազարեթայ Սուրբ Եկեղեցին, Սրբազանը պատարագ կը մատուցանէր Յունիս 7-ին եւ Պատուիրակի իր հանգամանքը կը հաստատէր կոնդակի ընթացքով:

Այդ օրերուն Կալկաթայի հայ համայնքը 450-500 հայեր կը հաշուէր եւ ունէր եկեղեցական, բարեգործական, մշակութային եւ մարզական «ինը միութիւններ»: Գեղամ արեղայ Զաքարեանին հետ, որուն մասնաւոր վարդապետութեան չորս աստիճանները կը շնորհէր, Հայկազուն Արքեպիսկոպոս Աբրահամեան պաշտօնական այցելութիւն կուտար հայոց Մարդասիրական ձեմարանին եւ Դաւթեան Օրիորդաց Վարժարանին, առաջինը հիմնուած 1821-ին Մնացական վարդանեանի եւ Աստուածատուր Մուրատխանեանի բարերարութեամբ, իսկ երկրորդը՝ 1921-ին Ջուղայեցի վաճառական Դաւիթ Աւետիք Դաւթեանի անունով: Կալկաթայի երկու միւս հայ եկեղեցիներն են, մին գերեզմանատան Ս. Երրորդութիւն (1867), եւ միւսը՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ (1906): Սրբազանը կ'այցելէր նաեւ Չինաստանի Ս. Յովհաննէս Մկրտիչ (1695), եւ Ս. Աստուածածին (1758) եկեղեցիները: Այդ հինաւուրց եկե-

ղեցիներուն համար յատուկ ուխտի օրեր եւ օրական պաշտամունքներ կատարել կը սահմանէր:

Աւստրալիա

Անցնելով Սինկափուրէն ուր 35 հայեր կը բնակէին, Հայկազուն Սրբազան Սիտնի կը հասնէր Յունիս 17-ին եւ կը դիմաւորուէր Արամայիս Ա. Քհնյ. Միրզայեանի եւ եկեղեցական վարչութեան անդամներուն կողմէ, առաջնորդուելով դէպի Ս. Յարութիւն եկեղեցին տալու համար հոծ բազմութեան իր առաջին պատգամը: Սրբազանը պատարագ կը մատուցանէր տեղական սրահի մը մէջ, եկեղեցւոյն փոքր

կան ընդհանուր ժողովին, խմբագրելով նոր Կանոնագիրը եւ զայն պետութեան կողմէ վաւերացնելով, «այն ոգիով որ ամբողջ թեմը ենթակայ է Ս. էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետութեան»: 1964 թուին Աւստրալիոյ թեմը կը հաշուէր 4000-ի մօտ հայութիւն, որոնց մեծամասնութիւնը՝ 2700 հոգի Սիտնիի մէջ, եւ 900՝ Մելպուռնի մէջ: Մնացեալները մինչեւ 100 հայեր կը բնակէին Բրիթ եւ Ատելայիտ քաղաքներուն մէջ, եւ մաս մըն ալ Նոր Ջելանտա:

Սինկափուր եւ Կալկաթա

Հայկազուն Արքեպիսկոպոս հրաժեշտի իր պատարագը կը մատուցանէր Սիտնիի Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ 1965 Նոյեմբեր 29-ին, եւ երկու օր անց կը հասնէր Սինկափուր, ապա Կալկաթա ուր Անկիլիզան եկեղեցւոյ մէջ թեմի հաստատման 150-ամեակը պիտի նշուէր: Յոբելիանական հանդիսութեանց ներկայ կ'ըլլար նաեւ ինք եպիսկոպոսական լրիւ հանդերձանքով՝ ի շարս Հնդկաստանի, Սէյլանի, Ամերիկայի եւ Անգլիոյ եպիսկոպոսներուն: Արձակման «Պահպանիչ» ու «Հայր Մեր» Հայկազուն Սրբազան կ'արտասանէր:

Ապրիլեան Եղեռնի Յուշարձան

Հայրապետական Պատուիրակ Սրբազանը կը յաջողէր նաեւ Ապրիլեան Եղեռնի յիսնամեակին Յուշարձան մը կառուցանել Կալկաթայի հայոց Նազարեթայ եկեղեցւոյ գաւիթին մէջ, որուն բացումը ինք կը կատարէր 1965-ի Ապրիլ 25-ին: Հոգեհանգստեան սուրբ պատարագին ներկայ կ'ըլլար նաեւ Անկիլիզան եկեղեցւոյ եպիսկոպոսը իր եպիսկոպոսական լրիւ զգեստաւորումով: Իր Մայր Աթոռ վերադարձն առաջ Հայկազուն Արքեպիսկոպոս Աբրահամեան կատարեց քահանայական ձեռնադրութիւն մը Պոմպէյի հայ համայնքի խնդրանքին վրայ Սուրբ Պետրոս եկեղեցւոյ համար, Գէորգ Ստեփանեան երիտասարդը քահանայութեան կոչելով եւ զինք Տէր Վազգէն քահանայ անուանելով:

Նիւ Տելի Պետական Այց

Հայկազուն Արքեպիսկոպոս Յունիս 14-ին Նիւ Տելի կը մեկնէր, եւ կանխաւ առնուած ժամադրութեամբ պաշտօնական հանդիպում կ'ունենար Հնդկաստանի Նախագահ Ռատահարիչային, Վարչապետ Ինտիրա Կանտիին, Ներքին Գործոց Նախարար Կիւլչատի Լալ Նանտայի եւ այլ անանց», ու Մայր Աթոռ կը վերադառնար Մոսկուայի վրայով 1966 Յունիս 17-ին, կատարելէ ետք Հայրապետական Պատուիրակի իր երկամեայ երախտաշատ պաշտօնը լրիւ արդիւնաւորութեամբ:

Գարեգին Եպիսկոպոս Գազանճեան

Հայրապետական Պատուիրակի հիմնական լրեւ հաստատ գործունէութեան որպէս անմիջական հետեւանք Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգէն Ա. Հայրապետ, նկատի առնելով Հայկազուն Արքեպս. Աբրահամեանի աշխատանքին ընարձակ տեղեկագիրը, եպիսկոպոս կը ձեռնադրէր Երուսաղէմի միաբաններէն եւ Միացեալ Նահանգաց Ուսանողներին հայ համայնքին հոգեւոր հովիւ Գարեգին Մ. Վրդ. Գազանճեանը, եւ իր 1966 Հոկտեմբերի Սրբատառ կոնդակով Ծայրագոյն Արեւելքի Առաջնորդ կը նշանակէր զինք:

Վերադարձ Սիտնի

Վերադառնալով Սիտնի Հայկազուն Սրբազան Նոյեմբեր 7-ին կը նախագահէր եկեղեցւոյ անդամա-

ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ ՇԻՆԱԿԱՆՆԵՐԻ ԶԵՐՈՍԱՄԱՐՏԸ (102-րդ Տարեդարձի առթիւ)

ՊՕՂՈՍ ԱՐՍԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ (Շարունակուած Գախորդ թիւէն)

«Պաշտպանական խորհուրդը» օգնութեան համար նախաձեռնել էր Հալէպի Ամերիկեան Հիւպատոսին, Պօղոս Նուպար Փաշային եւ Հայոց Առաջնորդարանին նամակներ յղել: Խաչեր Ազապեանը յանձն էր առել այն Հալէպ հասցնել, սակայն կէս ճանապարհից ետ վերադարձել: Փորձել են յոյները միջոցով այն ուղարկել, երեւի անոնք հասցեատէրերին չէին հասել: Ենթադրելով, որ լեռան հիւսիսային կողմի Ալեքսանդրէթ նաւահանգստում բարեկամ երկրի ռազմաճակատ կարող էր խարխաւած լինել, փորձել էին երիտասարդ լողորդի միջոցով անգլերէնով գրուած մի հաղորդագրութիւն ուղարկել: Երիտասարդը ապարդիւն վերադարձել էր, նաւահանգստում ռազմաճակատ խարխաւած չէր:

Տիգրան Անդրէասեանի խորհուրդով, կանայք պատրաստել էին երկու վիթխարի սպիտակ դրօշակներ, որոնցից մէկի վրայ սեւ ու խոշոր մեծատառերով գրուել էր՝ «ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԸ ԴՅՈՒՄՆՈՒՄ ԵՆ, ՓՐԿԵՑԻՔ», միւսի վրայ իր քրոջ կողմից ասեղնագործուած խոշոր կարմիր խաչ: Դրօշակները ամրացրել էին ծառին, ծովի հորիզոնը դիտելու համար շուրջօրեայ հերթապահութիւն սահմանել: Ծովափին, հմուտ լողորդ երկու լեռնական մարդկանց շուրջօրեայ հերթապահութիւն սահմանել, դէպի երեւացող նաւը լողալու ու իրենց աղերսագիրը յանձնելու նրա հրամանատարին:

«Պաշտպանական խորհուրդի»-ն առաջարկ էր եղել մակոյկ պատրաստել, նաւարկել դէպի Կիպրոս կղզի, տեղի Անգլիական կառավարիչին տեղեկացնել լեռան պաշտպանների վիճակի մասին: Ատաղձագործները, արհաւիրքից փրկութիւն փնտռելու նման «Նոյան Տապան» նաւակ էին պատրաստել, երկու հոգով նաւարկելու դէպի Կիպրոս կղզի, աղերսագրի վեց օրինակները յանձնել՝ կղզու կառավարիչին, Անգլիոյ թագաւորին ու արտաքին գործերի նախարարին, Պօղոս Նուպար Փաշային եւ նաւարկութեան ընթացքում որեւէ հանդիպած նաւի հրամանատարին: Նաւակը վարելու յանձնառու մարդկանց բացակայութեան պատճառով գործողութիւնը ձախողուել էր:

Սեպտեմբերի 5-ի Կիրակի առաւօտ էր, բոլոր պատանաքների սպասաւորներով դատարագ էին մատուցում...: Խնդրելու ի՞նչ, կռուի էին ելել լեռներ, մարտնչելու եւ ոչ թէ աղերսելու...: Երկիրն էր ջինջ ժպտացել, կապոյտ ցօղել անտառախիտ լեռան բարձունքների ծառերի վարսերին: Միջօրէ, արեւն էր իջել լեռան վրայ, փրկութեան աւետիսի շողերի լոյս վառելու հիւղաւանի վրայ: Յանկարծ հիւղաւանն է որոտացել՝ «Վափօուր իկէիր-ՇՈՂԵՆԱԻԸ ԵԿԵՐ Է: Ռազմաճակատ, որպէս փրկութեան յոյս լոյսի հրավառ կանթեղ նաւարկում էր դէպի ծովափ: Նաւաստիները նշմարել էին լեռան բարձունքին փողփողացող դրօշակները, պատասխանել հերթապահողի շարժումներին, աւելի մօտեցել ավիին, իմասնու լեռան վրայ պատահածի մասին: Ծովակալ Տարթիթ Տիւ Ֆուրնէ, իր «Պատերազմի Յիշատակները» գրքում տեղեկացրել՝ որ «Սեպտեմբերի առաջին օրերին,

Կիշէն յաժանաւի հրամանատար Քափիթէն Պրիսոնը ցամաքի բլուրի վրայ նշաններ էր տեսել: Ափին մօտեցող յաժանաւը մակոյկ էր իջեցրել ծով, դէպի նաւ լողացող լեռնականներին յաժանաւ բարձրացնելու: Ֆրանսերէն իմացող Խաչեր Տուսմանեան բացատրել էր եղելութիւնը: Նաւապետը խօստացել ութ օրուայ ընթացքում վերադառնալ, իմացնել հնարաւոր օգնութիւն տրամադրելու միջոցների մասին»:

Պետրոս Տմլազեան, որը նոյնպէս Ֆրանսերէն էր իմացել, նաւ ժամանել, տեղի ունեցածի մասին նաւապետին մանրամասն տեղեկութիւններ յայտնել: Համաձայն նրա ցուցմունքի, յաժանաւը երկու ժամ շարունակ ռմբահարել էր լեռան նախաբլուրների վրայ ծուլարած թշնամու գործի դիրքերը, ռազմա-նիւթի պահեստի վերածուած Քէպուսիէ գիւղի եկեղեցին եւ թուրք վերաբնակներով լեցուն գիւղը: Ես, Հայկական լեզունի «Կապուրալ» Արմենակի մանչ, շօշափել եմ եկեղեցու որմին միւրձուած ռումբի կտորը, ուրախութիւնից ցատկել՝ իմանալով, որ այն դուշմանի վրայ ընկած ռումբի բեկոր էր: Վառուած էր Քէպուսիէն, սպանուած էին վերաբնակները ու պահեստի գինուորները, ողջ մնացածները սարսափահար փախչում: Առաջին մարտում պարտուած Խալէտը, խրախուսել նրանց, որ Գերման մի մարտանաւ էր սխալմամբ ռմբահարել տեղանքը: Պարտուած թշնամին խորհել էր, որ լեռը պաշարելը անարդիւնաւէտ կը լինէր, Ֆրանսացիք ու հայերը կարող էին լեռան ու դաշտային կողմերից արշաւանք կազմակերպել: Դուշմանը, Սեպտեմբերի 7-ին նոր յարձակում է ձեռնարկել: Ճակատամարտը շարունակուել էր մինչեւ երեկոյ, թշնամու գործը բազմաթիւ գոհերով, ոչ թէ նահանջել, այլ փախել էր լեռներից ու նրա ստորոտներից: Նորէն լեռնական հայերի յաղթանակ, կռոււած յաղթում էր ոգին, հողի բոյրի արթնած ոգու հուրը: Լեռան վրայ ծաւալուած մարտերի ատեն, «Պաշտպանական խորհուրդի»-ի պատուիրակութիւնը «Ժան Տարք» մարտանաւի վրայ տեսակցել էր Վից Ամիրալ Տարթիթ Տիւ Ֆուրնէ-ի հետ, որը ազնուաբար ժամանել էր լեռան ստորոտի ծովափ, տեղեկանալու լեռնականների կռիւների ընթացքի եւ նրանց կացութեան մասին: Լեռնականներին քաջալերել էր՝ ի նոր կարգադրութիւն շարունակել դիմադրութիւնը:

Սեպտեմբեր 9-ի առաւօտեան, երկու Ալաուի մարդկանց տղաներ երեք տարբեր գրութիւններ յանձնել պատնէշների պահպաններին: Որոնցից՝ տղթթօր Բենիամինի նամակները յանձնուել էին Տէր Աբրահամին ու Տէր Վարդանին, իսկ արքունի հազարապետի նամակը հինգ գիւղերի «Մուխթարական» գիւղապետական» ժողովներին: Ժողովուրդի հետ խորհրդակցելու պատճառով, խոստացել էին քսան չորս ժամ յետոյ պատասխանել: Առանց պատասխանի սպասելու, թուրքը նոր յարձակում էր նախաձեռնել: Լեռնական հայը պատրաստ էր նոր կռուի, իրենց պէտքերից ու ոգու շանթերից պայթած գնդակները մահ էին սփռել նրանց շարքերին, օրօրուել էին նրանց

շարքերը, փրկել էին պատնէշները, խառնաշփոթ փախուստի դիմել: Լեռնականների մղած վերջին կռիւը սպանել էր դուշմանի յոխորտանքի ոգին, մարտերում սպանուել էին «Մուսաների Լեռան» բարձունքներ ելած դուշմանի մինչեւ իսկ հազար գինուորներ ու հեռու անապատներից եկած աւարառու անօրէններ: Ցեղի-ազգի մարդկանց ոգու վրէժն էր իրենց կռիւը, հարիւր հազարաւոր անմեղ մարդկանց, հրեշտակային մանչերի արեան հատուցումն էր, ոչ թէ ներեցին թշնամուն, այլ սպաննեցին, սպաննելու եկած դուշմանին: Իրենց լեռներից շատ հեռու, դեռ մեծ կռիւ պիտի տային դուշմանին, Եւրոպացի սպաներին ցոյց տային հայոց կռուի ոգու կրակը, որոնց հրամանատարը պիտի ասէր՝ «Երկու հարիւր հազար անգլիացի գինուորի փոխարէն քսան հազար հայ գինուոր տուէք ինձ՝ միջին արեւելքը կը նուաճեմ»:

Սեպտեմբերի 10, առաւօտեան արեգակը ձեպել-Աքրա լեռան վրայից յուշիկ սահելով ալեկոծ ծովի սպիտակ փրփուրների վրայով, ողջոյնել Ֆրանսական Կիշէն ու Տէսեքս ռազմանաւերին, որոնք իրենց թնդանօթների երախներից կրակ էին տեղում Սուէտիոյ գորանոցի, Քէպուսիէ եւ Գապալըզ գիւղերի թշնամու յենակէտերին: Լեռների բարձունքների լանջերից իջած մօտակայ պահակակէտերի մարտիկները՝ ուրախ բացականչութիւններով, դիտում թշնամու գինուորներ եւ աւարառու աւազակների տապալիւր, ով կարող էր... փախչում էր: Վառուած էր գորանոցը, վառուած էին թշնամիներով վերաբնակեցուած գիւղերը, կրակի բոցերը կարմիր ժպիտ ցօղում մօտակայ պատնէշների մարտիկների դէմքերին, որոնք իրենց դիրքերից իջնելով՝ ողջերին կենդանիների հօտերի նման քշել հեռու-հեռուներ: Լեռան կռիւը շարունակելու համար ռազմանաւերի հրամանատարները մերժել էին պարէն ու գինամթերք տրամադրելու լեռնականների խնդրանքը: Թուրք-խաչի ավերիին նոր ռազմաճակատ չբացելու համար, Ֆրանսական կառավարութիւնը մերժել էր նաեւ ցամաքահանում կատարել: Երկու օրերի ընթացքում, Լեռնականները՝ իրենց ինչքերով, գրաստներով, անասուններով, «փրկութեան հովիտ»-ից ծովեզերք իջել: Սեպտեմբերի 12-ին, նաւազները շատ սիրալիր հոգատարութեամբ, ալեկոծ ծովի ալիքների բաշերը ճողջող մակոյկներով լեռնականներին փոխադրել՝ Կիշէն, Տէսեքս, Տէսթիէ, Ամիրալ Շառնէ ու Ֆօտր ռազմանաւեր, վերջինը իր ճամբորդներին յետոյ պիտի յանձնէր Անգլիական Բէյլըն օդանաւակիր, որոնք նաւարկում էին դէպի Եգիպտոս: Ռազմանաւեր, որոնք «Մուսաների Լեռ»-ան ամենաբարձր գագաթին պիտի քարանային, աշխարհին աւետելու հայոց ոգու կռուի յաղթանակը: Լեռնականները յենուել նաւերի բազրիկներին, յաղթանակի լոյսով հրավառուած ակներով նայել իրենց լեռներին, շէներին, ո՞վ իմանար յետոյ . . . իրենց գէնքերի համազարկերով փառաբանել իրենց Արմին ցեղի կռուի ոգին: Լեռնականների փրկութեանը անմուռանալի նպաստ են բերել նաեւ Ֆրանսական ծովային սպա, բանաստեղծ Վասան Թէքէեանի գարմիկ՝ Տիրան Թէքէեանը, Կիշէն ռազմանաւի Քափիթէն Պրիսոնը եւ Փոխ Ծովակալ Տարթիթ Տիւ Ֆուրնէն, որոնք նաւարկել էին դէպի

ծովափ եւ առաջինը լեռնականներին հետ կապ հաստատել: Իր յուշերում Տիրանը պիտի գրէր՝ «Երբ վերջին կանայք, վերջին ծերունիները ու երեխաները նաւ բարձրացան, հայերի քսան պահակախմբերը միաժամանակ թողեցին իրենց լեռնային դիրքերն ու տարբեր կողմերից ծովափ ուղղուեցին: Ես տեսայ, թէ ինչպէս են ամրակազմ ու խիզախ ազատամարտիկները, կրծքերին լեփլեցուն փամփշտակայներ, փոքր խմբերով յայտնուած կիրճերից: Յանկարծ ձորակներից մէկի խորքում յախուռն կրակահերթեր հնչեցին, եւ երբ ցանկացայ իմանալ պատճառը, ինձ բացատրեցին, որ ապստամբներն այդպէս են ողջոյնում իրենց հրամանատարին: Նոյն ակնթարթին էլ տեսայ նրան, նա առաջանում էր երկգոյն՝ ձերմակ ու կապոյտ դրօշի ուղեկցութեամբ: Մուսա Լեռան քաջամարտիկները Ֆրանսիական դրօշի ներքոյ էին կռուել թուրքերի դէմ, որի կարմիր երիզը՝ անալով մեր ծովակալի հրահանգին, հանել էին: Հրամանատարը Եսայի Եաղուպեանն էր՝ (Մուսա Լեռան հերոսամարտը միանձնեայ ղեկավար չի ունեցել) իր սառնասրտութեամբ, ներքին արժանապատուութեամբ հիացմունք չարուցող մի անձնաւորութիւն, ում գլխի փաթթոցը, ինչպէս սասունցի հայուկներից, ծածկում էր ճակատը ու իջնում մինչեւ ուսը, իսկ փամփշտակայներն ուռճացնում էին կուրծքը: Նրա հայեացքը միաժամանակ թախծոտ ու հրայրքոտ էր: Մագալկաւած դէմքերով կտրիճների մի փոքրաթիւ մարտախումբ հետեւում էր նրան, նա դանդաղ առաջանում էր գէնքերի կամարի տակով, որոնք ապստամբները, ճանապարհի ամբողջ երկարութեամբ, խաչածէւել էին նրա գլխաւերեւում: Ես ընդառաջ գնացի Եաղուպեանին, ձեռքը ջերմօրէն սեղմելով շնորհաւորեցի յանդուգն դիմադրութեան համար, որից յետոյ փոխանցեցի պետերիս հրամանը: Պէտք էր Մուսա Լեռը թողնել, անմիջապէս նաւ նստել: Հովիտն այժմ անպաշտպան էր, հակառակորդը, եթէ ավիին մօտենալու ժամանակ ունենար, շատ հնարաւոր է, որ ռմբահարէր նաւ նստողներին: - Թշնամին հեռու է,- պատասխանել էր Եաղուպեանը,- վախկոտ թուրքը ձեր հրետակոծութիւնից յետոյ գետնի տակ է մտել, երեկուայ գրոհը սոսկ ձեւականութիւն էր, մի մտահոգուէք, բայց նկատի ունեցէք նաեւ, որ մենք չենք կարող ուրախ սրտով լքել մեր հայրենիքը: Այս վայտերը դարբերով մերն են եղել, այստեղ մենք մինչեւ այժմ, յիսուն օր շարունակ յաղթական մարտեր ենք մղել մեզ գերազանցող թշնամական ուժերի դէմ: Ախ, եթէ թոյլ տայիք շարունակել պայքարը :

Շնորհիւ ասպետական Ֆրանսիայի ազնուագոյն առաքելութեան, յոռեգոյն վախճանից իրենց փրկութիւնն էին գտել «Մուսաների Լեռ»-ան շէների 4200 Արմին-հայեր: Աստուծոյ սիրոյ ու բարութեան լոյսը հոգում Ծովակալ Տարթիթ Տիւ Ֆուրնէն, Սեպտեմբերի 8-ին այցելել Կիպրոս ու Եգիպտոս՝ իմանալու նրանց պատրաստակամութիւնը ապստամբ հայերին իրենց երկրներում ապաստան շնորհելու: Եգիպտոսի կառավարչութիւնը մերժել էր ծովակալի միջնորդութիւնը, իսկ Կիպրոսի գաղութային վարչակազմը նման թոյլտուութիւն ստանալու համար դիմել Լոնտոն:

ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՆՈՐ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՍԵՄԻՆ



ԼԻՆՏԱ ԳԱՆՏԻԼԵԱՆ

Հայ Քոյրերու Վարժարանը մեծ ուրախութեամբ իր դրները բացաւ եւ պաշտօնապէս 2017-2018 կրթական տարեշրջանը սկսաւ Երեքշաբթի 5 Սեպտեմբեր, 2017-ի առաւօտեան երբ ծնողներ, աշակերտներ, ուսուցչական կազմ եւ տնօրէնութիւն կազմ ու պատրաստ ու կարօտով շրջապատած էին գիրար՝ արտայայտելով իրենց զօրակցութիւնն ու պատրաստակամութիւնը դիմագրաւելու նոր կրթական տարեշրջան մը եւ յաջողութեամբ նուաճելու նոր մարտահրաւէրներ:

Երեքշաբթի առաւօտեան վարժարանիս Գանիէլեան սրահէն ներս, աշակերտները իրենց դասարանային կարգով շարուած էին, երբ տեղի ունեցաւ պաշտօնական արարողութիւն՝ առաւօտեան աղօթքները, դրօշակի արարողութիւնը եւ Ամերիկեան եւ Հայկական զոյգ քայլերգներու երգեցողութիւնը, ապա տնօրէնուհի Քոյր Լուսիա բարի գալուստի խօսք ուղղեց բոլոր աշակերտներուն, մասնաւորապէս նոր եկող աշակերտներուն եւ գիրենք բեմ հրաւիրելով ներկայացուց, ինչպէս նաեւ բարի գալուստի մաղթանքներով ներկայացուցաւ առաջին դասարանի աշակերտները, որոնք մեծ ակնկալութեամբ եւ ակնածանքով անցած էին մանկապարտէզէն նախակրթարան: Տնօրէնուհին նաեւ բարի գալուստի խօսք ուղղեց բոլոր աշակերտներուն, ծնողներուն, ուսուցչական կազմին եւ միաժամանակ ներկայացուց նոր ուսուցիչները, որոնք մեծ խանդավառութեամբ եւ ծափօղիւններով ընդունեցան ներկայներուն կողմէ:

Դպրոցական օրը սկսաւ անմիջապէս առաւօտեան արարողութիւնէն ետք, երբ ութերորդ ակարտական դասարանի աշակերտները առաջնորդեցին առաջին դասարանի աշակերտները իրենց դասարանը եւ շուտով դպրոցը մտաւ իր սովորական ընթացքին մէջ, ամէն ոք իր աշխատանքին փարած՝ լարուած ժամացոյցի ճշգրտութեամբ սկսաւ իր պատասխանատու աշխատանքին:

Վարժարանիս պաշտօնէութիւնը, ուսուցչական կազմը եւ տնօրէնութիւնը Օգոստոս ամսուան վերջաւորութեանէն արդէն ներկայ էր վարժանէն ներս եւ նախապատրաստական աշխատանքներով կը պատրաստուէր լաւագոյնս ընդունելու աշակերտները եւ սկսելու 2017-2018 կրթական արդիւնաբեր տարեշրջան մը:

Ուսուցիչները ունեցան իրենց

ուսուցչական նախապատրաստական ժողովները, նախնական դարմանումներու վարժողական դասընթացք եւ կարգապահական օրէնքներու, արդիական դաստիարակութեան դրոյթներու, գիրքերու նորոգուած պատճեններու նիւթերով սեմինարներու ներկայ գտնուեցան, նաեւ ունեցան վարժարանի ընդհանուր կրթական ծրագրի հետ կապակցաբար աշխատանքային հանդիպումներ:

Սեպտեմբեր 5-ին, վերամուտի առաջին օրն իսկ տեղի ունեցաւ նախամանկապարտէզի եւ մանկապարտէզի բոլոր դասարաններու ծնողական հանդիպումը, ուր մանկապարտէզի Տնօրէնուհի Սօնա Գազանճեան բարի գալուստի խօսքէն ետք սպառիչ կերպով բացատրեց դպրոցական օրէնքներն ու առօրեայ պահանջները, ապա ծնողները բաժնուեցան սրահէն եւ իրենց զաւակներու դասարաններուն մէջ հանդիպեցան դաստիարակներուն, ծանօթացան դասարանի միջավայրին, դաստիարակման դրոյթներուն եւ դասաւանդման ձեւերուն եւ տեղեկացան այլ մանրամասնութեանց, որ անմիջապէս արդէն կապ ունի իրենց ձագուկներու առօրեայ դպրոցական երկար ժամերուն հետ:

Սեպտեմբեր 14-15 երեկոյեան տեղի ունեցան նախակրթարանի եւ միջնակարգի ծնողական հանդիպումները, ուր խօսք առին՝ Տնօրէնուհին, պաշտօնէութիւն, եւ մարզական յանձնախումբի ներկայացուցիչ:

Տնօրէնը բարի գալուստ մաղթեց բոլոր ծնողներուն, նոր եւ հին, որոնք վստահելով այս կրթօճախին գոհունակութեամբ յանձնեցին իրենց զաւակները ակնկալելով տարրական եւ հայեցի դաստիարակութիւն՝ քրիստոնէական խաղաղ մթնոլորտի մէջ, ապա ծանօթացուց նոր ուսուցիչ-ուսուցչուհիները, նաեւ քոյր Լիւսիա գեկուցեց ամրան դպրոցէն ներս տեղի ունեցած նորոգութիւններու մասին, որոնք պիտի նպաստեն աշակերտութեան համար ապահով եւ հանգստաւէտ միջավայր մը ստեղծելու:

Ընդհանուր գեկուցներէ ետք ծնողները բաժնուելով սրահէն ուղղուեցան իրենց զաւակներու դասարանները եւ ծանօթացան անոնց առօրեան անցուցած կրթական միջավայրին, ուսուցիչին, դասաւանդման դրոյթին, նիւթերու տարեկան ծրագրին եւ կարգապահական օրէնքներուն: Նաեւ ուսուցիչները սիրով ընկալեցին ծնողներուն առաջարկները եւ համբերութեամբ պատասխանեցին բոլորին հարցումներուն:


ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿՈՅ ԳԱՐԵԳԻՆ Ա. ՅՈՎԱՍԷՓԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՎԱԿԵՐԱԳՐԵՐՈՒ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐՈՒ ՀՆՈՐՀԱՆՂԵԱՆ

Սեպտեմբերի 20-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչէ եւ Թամար Մանուկեան» Մատենադարանում, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի, տեղի ունեցաւ երջանկալի շատակ Տ. Տ. Գարեգին Ա. Յովասէփեան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին նուիրուած վաւերագրերի եւ արխիւային նիւթերի երկու ժողովածուների շնորհանդէսը:

Ժողովածուներն ընդգրկում են Հայաստանի Ազգային արխիւում եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան արխիւում պահուող վաւերագրերն ու արխիւային նիւթերը: Վաւերագրերի Ա. հատորը սպառուել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, իսկ Բ. հատորը՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի կողմից:

Գարեգին Ա. Հայրապետի ծննդեան 150-ամեակի եւ վախճանման 65-րդ տարելիցի ոգեկոչմանը ձօնուած երեկոյթը սկսուեց Տէրունական արթթքով եւ Մայր Աթոռի Արխիւի տնօրէն Արժանապատիւ Տ. Ասողիկ քահանայ Կարապետեանի բացման խօսքով: «Բնաւ պատահական չէ, այլ աստուածային նախխնամութիւն է, որ մեր ազնեայ Առաջին հանրապետութեան ազգային հերոսներից մէկի՝ Տ. Տ. Գարեգին Յովասէփեան Կաթողիկոսին նուիրուած պատմական կարեւորութիւն ունեցող այս ժողովածուների լոյս ընծայումն ու ներկայացումը կանխում է Սարգարապատի հերոսամարտի եւ Հայոց պետականութեան վերականգնման 100-ամեայ յոբելեանները: Մեր Հայրենիքը, մեր Ազգն ու մեր Եկեղեցին այսօր էլ եւ ցկատարած աշխարհի կարիք ունեն անձնուրաց ու անձնազօր զաւակները, պետական այրերի ու հոգեւոր սպասաւորների:

Ամենեւին պատահական չէ, այլ Աստուծոյ նախախնամ կամքի համաձայն է, որ մեր Սուրբ Եկեղեցու շնորհազարդ գահակալներից Տ. Տ. Գարեգին Յովասէփեան Կաթողիկոսի այս վաւերագրական ժառանգութիւնը հրատարակուած է համաժամանակ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում եւ Կիլիկիոյ Կաթողիկոս-



սութեան նատալար Անթիլիասում», -նչեց Ասողիկ քահանան իր խօսքում: Այնուհետեւ շնորհանդէսի մասնակիցները դիտեցին Գարեգին Ա. Յովասէփեան Կաթողիկոսին նուիրուած ֆիլմը, որից յետոյ ժողովածուների բովանդակութեանը եւ կատարուած աշխատանքին անդրադարձ կատարեց Հայաստանի ազգային արխիւի աշխատակից, պատմ. գիտ. թեկ. Գոհար Աւագեանը, ում ազնիւ աշխատասիրութեամբ պատրաստուել են ներկայացուած արժէքաւոր հրատարակութիւնները:

Այս առիթով խօսքով հանդէս եկաւ նաեւ ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտի տնօրէն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնեանը՝ հանգամանօրէն անդրադառնալով Յովասէփեան Կաթողիկոսի լուսաւոր կերպարին, ժամանակի դժուարին պատմական հանգամանքներում նրա նուիրեալ գործունէութեանը եւ ազգին ու Հայոց Եկեղեցուն մատուցած անգնահատելի ծառայութեանը: ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արուեստագիտութեան դոկտոր, պրոֆէսոր Վիգէն Ղազարեանն իր հերթին խօսեց Գարեգին Ա. Յովասէփեան Կաթողիկոսի գիտական վաստակի մասին:

Հանդիսութեանը Հայաստանի պետական կամերային երգչախումբի (գեղարուեստական ղեկավար եւ դիրիժոր Ռոբերտ Մլքէյեան) կատարմամբ հնչեցին հոգեւոր երգեր, հայ եւ օտար կոմպոզիտորների ստեղծագործութիւններ:

Վերջում Գարեգին Ա. Յովասէփեան Կաթողիկոսի մեծ վաստակի եւ յիշատակի առջեւ իր խոնարհումն արտայայտեց Նորին Սրբութիւն Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը:

Վաւերագրերի շնորհանդէսն ամփոփուեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամով:

**OFFICE SPACE FOR RENT
IN PASADENA**

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave
Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

ՊՏՈՒՂՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԸ ՆՊԱՍՏԵՆ ԱԲԵԼՈՐԴ ԿՇԻՌՔԻ ՅԱՌԱՋԱՑՄԱՆ

Աւելորդ կշիռ քի յառաջացումն խոստովանելու համար, հարկաւոր է սահմանափակել հետեւեալ պտուղներուն օգտագործումը:


Ուրիշ ի՞նչ պտուղներով կարելի է փոխարինել զանոնք:

* Ծիրան: Ծիրանը բաւական ծանր է նիւթափորանակութեան համար: Անիկա դիւրութեամբ կը լանգեցնէ որովայնի գրգռուածութեան: Ծիրանը նաեւ կը պարունակէ ալիւրոսի սիւրճի, որ կը նպաստէ սինիլալին թթուի արտադրութեան: Ասիկա կը կրնայ սրտխառնոց յառաջացնել: Այդ պատճառով ալ անդադրեալները խորհուրդ կու տան միաժամանակ Յ 3 հատէն աւելի ծիրան չուտել: Փոխարէնը՝ կազմուածքին համար շատ օգտակար է ելակը: Անիկա կը պարունակէ մեծ քանակով ջուր, Շ կենսա նիւթ եւ մանրաթելեր ու շատ քիչ քանակով շաքար:

* Տանձ: Տանձը, հակառակ իր բազմաթիւ օգտակար յատկութիւններուն, կրնայ յառաջացնել աղիքային խանգարումներ եւ փորկապութիւն: Ձայն կրնայ փոխարինել սեխով եւ ձմերուկով: Ասոնք մեծ քանակով շաքար, բայց նաեւ մեծ քանակով ջուր կը պարունակեն եւ ունին միզամուղ յատկութիւն, որուն շնորհիւ կ'օգնեն, որ մարմինը մաքրուի թունաւոր նիւթերէն:

Ասոնք խորհուրդ կը տրուին նաեւ փշտիկներու եւ երիկամներուն մէջ քարերու առկայութեան պարագային:

* Աւոքաւոր: Ասիկա չափազանց օգտակար պտուղ է, սակայն կը պարունակէ մեծ քանակով ջերմութ:



Այդ պատճառով ալ, եթէ կը պայքարիք աւելորդ քիլոկրամներու դէմ, հարկաւոր է զայն ուտել քիչ քանակով, այն ալ առաւօտեան ժամերուն: Աւոքաւոր կրնայ փոխարինել հատապտուղներով, որոնք կը պարունակեն քիչ քանակով շաքար, մեծ քանակով կենսա նիւթեր ու հակօքսիտաններ: Ասոնք նաեւ կը նպաստեն ճարպերու այրման:

* Խաղող: Խաղողը խորհուրդ է տրուիր այն անձերուն, որոնք աւելորդ կշիռ քի հետ կապուած խնդիրներ ունին: Խաղողը կը պարունակէ մեծ քանակով շաքար, իսկ անոր կեղեւը բաւական դժուար կ'ենթարկուի մշակման: Խաղողը փոխարինեցէ ինձորով: Անիկա կը յագեցնէ քաղցը, կը պարունակէ շաքար մը օգտակար մասնիկներ, մանրաթելեր եւ հակօքսիտաններ:

* Պանն: Պաննը երկար մշակման կ'ենթարկուի եւ կը նպաստէ աւելորդ քիլոկրամներու կուտակման: Եթէ չէք ուզեր կշիռը հաւաքել, օրունակ ընթացքին կ'երէք միայն մէկ պանն: Ձայն կրնայ փոխարինել կրիֆոնով, որ աւելորդ կշիռ քի դէմ պայքարելու թիւ 1 պտուղն է:

ԽՆԴԻՐՆԵՐ, ՈՐ «ԿԸ ՊԱՐԳԵԻ» ԶԱՄԱԿԱՐԳԻՉԸ ՍԵՁԻ

Այժմ դժուար է պատկերացնել որեւէ աշխատանք, ուր չօգտագործուի համակարգիչը: Սակայն, ատոր հետ միաժամանակ մեր կեանքին մէջ կ'առաջանան տարբեր խնդիրներ առողջութեան հետ: Տեսնենք, թէ ինչպիսի հիւանդութիւններ կրնայ «պարգեւել» համակարգիչին առջեւ աշխատանքը.

1) Վատ կազմուածք: Երբ դուք նստած էք համակարգիչին առջեւ՝ յաճախ ուշադրութիւն չէք դարձնէր ձեր դիրքին: Գրասենեակին մէջ անցուցած իւրաքանչիւր ժամը կը տկարացնէ:

Ինքնավերահսկողութիւնը: Իբրեւ հետեւանք՝ կառուցուածքը կը վատանայ: Այդպիսի վիճակ թոյլ չտալու համար պէտք է ճիշդ նստիլ՝ աթոռին կեդրոնը, մէջքի ներքեւի հատուածը պէտք է դպչի աթոռի մէջքին, իսկ ծունկերը պէտք է ծայրուած ըլլան:

2) Դատարկային փապուղիի ախտանիշ: Այս խնդիրը առաջ կու գայ դատարկի մշտական շարժումէն: Այս ախտանիշին խոստովանելու համար նուազեցուցէք ծանրաբեռնուածութիւնը մատներու եւ դատարկի վրայ: Արմուկները պէտք է ըլլան 90 աստիճանի տակ, իսկ ստեղնաշարը բաւական մօտիկ, որ պէս գի անընդհատ չերկարէք ձեր դատարկը: Պարբերաբար մերսեցէք դատարկները:

3) Պարանոցի եւ ուսերու պըրկում: Պարանոցի եւ ուսերու կաշ-

կանդուածութեան կ'առաջանայ լարուածութիւն: Փորձեցէք հետեւիլ ձեր մարմնին՝ համա կարգիչի առջեւ նստած ժամանակ: Պէտք է պարբերաբար հանգստացնել պարանոցի եւ ուսերու մկանները:

4) Ցաւ մէջքի հատուածին: Սեղանի շուրջ երկարատեւ նստիլը վաղ թէ ուշ ցաւոտ զգացողութիւններ կ'առաջացնէ: Վարժութիւններ կատարեցէք եւ կազմակերպեցէք աշխատանքային վայրը ալիւրոս, որ պէսզի անհարկի շարժումներ չընէք:

5) Աչքերու լարուածութիւն: Վատ եւ սխալ լուսաւորութեան, ինչպէս նաեւ պատասառի թնթոցէն աչքերուն մէջ լարուածութիւն կ'առաջանայ: Այս խնդիրը կարելի է վերացնել կարգաւորելով լուսաւորութիւնը, ընտրելով պայծառութեան ճիշդ աստիճան:

6) Աչքերու չորութիւն: Առանց թարթելու՝ աչքերուն մէջ չորութիւն կ'առաջանայ: Մի՛ մոռնաք յաճախ թարթել, երբ պատասառին կը նայէք: Եթէ խնդիրը ոչ մէկ ձեւով չի վերանար, կարելի է աչքերուն համար կաթիլներ օգտագործել:

7) Կարճատեսութիւն: Այս լուրջ խնդիրին խոստովանելու համար պէտք է կատարել շաքար մը վարժութիւններ: Հալեացքը քանի մը վայրկեան կեդրոնացուցէք ձեր մօտ գտնուող իրի մը վրայ, այնուհետեւ տեղափոխեցէք հեռու գտնուող իրի մը վրայ: Այս վարժութիւնը պէտք է կատարել օրը քանի մը անգամ:

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԱՅՊԱՆԵԼՈՒ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

1) Մի՛ փորձէք ամբողջ տարածութիւնը ձեզմով լեցնել: Որքան շատ փորձէք զինք կապել ձեզի, այնքան ան պիտի հեռանայ ձեզմէ: Տղամարդը պէտք է զգայ, որ ազատ տարածութիւն ունի, ժամանակ՝ իր հետաքրքրութիւններուն համար, միայնակ կամ ընկերներու հետ ժամանակ անցընելու հնարաւորութիւն:

Ան պէտք է ստիպուած ըլլայ իր սիրելիին բացատրելու եւ արդարանալու, որ իր ժամանցին համար ընտանեկան բարեկեցութեան սպառնացող ոչինչ կայ:

Անվստահութիւնը, մշտական վիրաւորանքները, վաղ թէ ուշ կը ստիպեն ձեզ, որ ձեր յարաբերութիւններուն այլ կերպ նայիք: Յիշեցէք, որ մենք ենք մեր երջանկութիւնը եւ կառուցողը, ե՛ւ կործանողը:

2) Պէտք է փոխզիջումներու երթալ: Այդ կերպով պիտի խոսափիք բազմաթիւ վէճերէ ու այլ տհաճութիւններէ: Յամառ ու եսասէր մի՛ ըլլաք: Եթէ փոխզիջումներու երթաք, ան նոյնպէս այդպէս կ'ընէ: Իսկ եթէ երկուքդ ալ անընդհատ կը պնդէք ձեր ուզածը, հազիւ թէ ձեր ամուսնու-



թիւնը երջանիկ ըլլայ:

3) Մի՛ փորձէք կատարել ըլլալ: Երբեք մի՛ վիճիք: Երբեք մի՛ գայրացնէք: Մի՛ հակաճառէք: Ո՛չ... Մի՛ փորձէք անոր համար կատարել ըլլալ, հակառակ պարագային ձեր յարաբերութիւնները արհեստական եւ անգոյն պիտի ըլլան: Եւ օր մը անպայման պիտի պայթիք, քանի որ չէք կրնար կուտակել ու ճնշել բոլոր յուզումները: Կ'ուզէք ներողութիւն խնդրել: Աւելի ուշադիր եղէք ձեր սիրելիին հանդէպ, քիչ քանակութեամբ ըրէք, սորվեցէք լսել: Միայն թէ մի՛ փորձէք ընել անհարկներ: Դուք անոր պէտք էք իսկական, երջանիկ, չափաւոր յուզական, քանի որ ան ձեզ սիրահարած է այդ վիճակով:

ԱՌԱՋԻՆ ԺԱՍԱԴՐՈՒԹԵԱՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

«Առաջին ժամադրութիւններ» թեման բաւական շատ տարածուած է: Այնուամենայնիւ կան քանի մը յայտնի սխալներ, գորս կ'ընեն երիտասարդները առաջին հանդիպման ժամանակ:

- Միայն ճշդապահութիւն: Առաջին հանդիպման հասնելու համար ուշանալը լաւ չէ, քանի որ ատիկա կը նուազեցնէ այն հնարաւորութիւնը, որ հանդիպումը կրնայ անցնիլ թեթեւ եւ ուրախ: Պէտք է լիջել, որ ոչ մէկուն համար հաճելի է սպասելը:

- Սպասել: Պէտք է խոսափիլ անձնական խօսակցութիւններէն: Առաջին ժամադրութեան ժամանակ լաւ կ'ըլլայ չպատմել նախորդ յարաբերութիւններու փորձին, աշխատավայրին կամ ընտանիքին մէջ եղած խնդիրներու մասին: Ձեր կապը պէտք է զարգանայ փուլ առ փուլ: Ինչպէս կ'ըսուի, ամէն ինչ իր ժամանակին:

- Միայն ոչ հեռախօսը: Առաջին հանդիպումը ճանաչողական է, անկէ ետք կարելի է որոշել՝ կ'արժէ՞ զարգացնել յարաբերութիւն-

ները, թէ՞ ոչ: Այդ պատճառով, լաւ պիտի ըլլայ երկու ժամ մէկ կողմ դնել հեռաձայնը եւ կեդրոնանալ զրուցակիցին վրայ:

- Չսպել զգացմունքները: Նոյնիսկ եթէ կ'երագնէք այդ մարդուն հետ հանդիպելու մասին եւ ձեր սիրտը ուրախութեան պատրաստ է դուրս թռչելու, լաւ պիտի ըլլայ զսպել ձեզ: Այդպիսի կիրքը կրնայ լրջօրէն վախցնել ձեր զրուցակիցը: Ձուսպ եւ հաճելի ըլլալը՝ առաջին հանդիպման համար «առաւելագոյնն է»:

- Ճիշդ վայր: Առաջին հանդիպման ժամանակ թատրոն կամ համերգի չ'արժեք երթալ: Այդպէս հնարաւոր չէ իրար լաւ ճանչնալ: Լաւ պիտի ըլլայ ընտրել հանգիստ եւ յարմարաւէտ սրճարան մը կամ հաճելի մթնոլորտով ճաշարան մը:

- Իրադարձութիւնները արագացնելու կարիք չկայ: Պէտք է խոսափիլ ընտանիքի, փոքրիկներու եւ ապագայ ծրագրերներու մասին խօսակցութիւններէն: Յետագային, բնականաբար, ամէն ինչ պարզ պիտի դառնայ երկուքիդ համար ալ:

Save the Date
Event: AACCCWD 2017 Convention & Assembly
Guest Lecturers: Very Rev. Fr. Daniel Findikyan, Dr. Kimberly James, Mr. Sevag Derderian
Location; Las Vegas, Nevada
Date(s): November 10-12, 2017
Contact: website: www.aaccwd.com
email: events@aaccwd.com

NATIONAL NOTARY ASSOCIATION
MEMBER
Garine Depoyan
626-755-4773
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106
ghdepoyan@gmail.com

Հայաստան-Սփիւռք Համաժողով

Շարունակուած էջ 6-էն

կական համայնքների ինքնակազմակերպման ուղղութեամբ միասնական ջանքերի գործադրմանը,

Արեւմտահայերէնի պահպանման, տարածման, Սփիւռքում հայոց լեզուի եւ հայագիտական առարկաների դասաւանդման աջակցութեան նպատակով Հայաստանի եւ Սփիւռքի մասնագիտական ներուժի համախմբմանը:

Համաժողովի մասնակիցներս լիալոյս ենք, որ Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի բոլոր կառույցները, երիտասարդութեան լայն ներգրաւմամբ, պատշաճօրէն կը նշեն

Հայաստանի առաջին Հանրապետութեան ու Մայիսեան հերոսամարտերի 100-ամեայ, ինչպէս նաեւ քաղաքամայր Երեւանի հիմնադրման 2800-ամեայ յոբելեանները:

Սոյն **ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ** երաշխաւորում ենք որպէս ուղենիշ ողջ հայութեան, Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի Հանրապետութեան պետական մարմինների, հայ եկեղեցու, համահայկական, համայնքային կառույցների ու կազմակերպութիւնների համար՝ հետամուտ լինելու համահայկական նպատակների իրականացմանը»:

Արտակարգ Իրավիճակի Մէջ Գտնուող Սփիւռք

Շարունակուած էջ 7-էն

հաստատուելը եւ հայրենիքը մարդու ժողով, տաղանդով եւ կարողականութեամբ հարստացնելը:

Միջին Արեւելքի հորիզոնին վրայ տակաւին կուտակուած անպարագիծ դաւադրութիւն կայ:

Սուրիահայ Սփիւռքը գաղթօճախի վերածուած ըլլալու սպառնալիքի տակ է: Այսօր այդ գաղութի զաւակներէն շատեր, հաւատարիմ նոր հայրենիքին, հաստատ եւ գիտակից կերպով պիտի փափաքին շարունակել իրենց կեանքը, վերջ ի վերջոյ օր մը, զարգացումի, վերաշինութեան եւ վերականգնումի ենթակայ ծծնդավայրի մը մէջ: Եւ մենք, յարգելով անոնց կամքը ու որոշումը մղուած մարդկային եւ ազգային պարտաւորութիւններէ,

պարտինք սատարել անոնց վերականգնումին: Ժողովուրդի մը կեանքին մէջ սակայն, մի քանի սերունդի բաժանումով անկողմնացոյց երկու բռնագողթ անկրկնելի մնալու է եւ ուրեմն հարկ է հաւաքուել հարազատ հողամասի մը վրայ ուր աւելի տրամաբանօրէն ապահովելի է աղէտի անկրկնելիութիւնը:

Դասը առած պէտք է ըլլանք: Յաջորդ արտակարգ իրավիճակի ենթակայ Հայ Սփիւռքը ընդհանրապէս եւ Միջին Արեւելեան ճակատը յատկապէս հարկ է հաւաքել ապահով, հիւրընկալ, գուրգուրալից եւ արդար հայրենիքի մը հողին վրայ:

Այս է իմ էլքը:
Սեպտեմբեր 19, 2017
Երեւան, ՀՀ

ԿԱՐՕՏԸ՝ ՆԵՐՇՆՉԱՆՔԻ ԱՂԲԻՐ

Շարունակուած էջ 13-էն

Երագ դրախտուած, Կարօստ՝ ցաւ է, Կարօստ՝ մուրազ, Կարօստ՝ լոյս է՝ Հողիցս ծնուած:

Ահա այստեղ, այս բանաստեղծութեան մէջ արդարացուած է կարծ տողերի աւելցումը, որովհետեւ իւրաքանչիւր տող՝ մի միտք է, մի պարբերութիւն, որ մուրճի հարուածի նման մեխուած է ուղեղիդ մէջ:

Մի քանի անգամ կարդացի այս գիրքը սիրելի Աիդա: Այն շատ խօսեց սրտիս: Սա մի պոէմ է Հայաստանի մասին, թաւ գոյնի վրձնահարուածներով գծուած մի համայնապատկեր, որի մէջ կան նաեւ այսպիսի քնքուշ տողեր.

Լոյսը կաթեց ամպի տակից, Օրը՝ զարթնեց շաղի շնչից, Ամպը լողաց, ժպտաց անհոգ, Ծիծաղ թափուեց արեւից բորբ:

«Սիրոյ պատարագ», - այսպիսի անուանում ունի Աիդա Պօղոսեանի յաջորդ գիրքը: Սա սիրուց խաբուած կնոջ ձիւն է, յուսախաբութիւնը: Եւ սակայն՝ նրա խաբուած սէրը վրիժառութեան զգացումից զուրկ է, հակառակը, նա ուզում է, որ սիրոյ յուշերը այրուեն, վերանան, մոխրանան ու ոչինչ չմնայ այդ սիրուց: Այնույնպէս ըմբռնուած խաւար գիշերում՝ նա նորից սիրոյ արեւ է փնտռում: Նրա սիրոյ մոխիրից մշտատեւ ծուխ է ելնում...

Աիդայի մօտ սէրը՝ զգայական, զգացական զարկերի, թրթիռների շաղախից հիւսուած ծիածան է, որը սիրտն ու հոգին կամարում, կամրջում է մի անտեսանելի տիեզերքի հետ, որտեղ մարդն ինքնուրոյն ու

ինքնատիպ է կերտում իր սիրոյ դրախտը, որի մէջ այդ զգացմունքը շղթայում է մարդուն, դարձնում իր գերին, կեանքը վար-դազոյն երազի է նման՝ ողողուած լուսաշող գոյներով.

Սիրտս՝ վերքի ծով է անհուն, Քեզ կորցրեցի, բայց ես՝ ինձ գտայ:

Հիանալի համեմատութիւններ, ածականներ, երեւոյթների մեկնաբանման, լուսաբանման ինքնուրոյն ձեւեր ու եղանակներ կան Աիդա Պօղոսեանի գրքերում: Անկասկած, ճակատագրի հարուածի արդիւնքում են ծնուել նրա ոչ լաւատեսական տողերը, ինչպէս. «Սիրտս դարպասն է իմ մենութեան», «Փորձում եմ հոգուս խռովքը գրելով սանձել», «Հաւուր պատշաճի լուռ կը հեռանամ աճուրդից կեանքի»:

Աիդա Պօղոսեանի բոլոր հինգ գրքերն էլ կարօտով են պարուրուած, նոյնիսկ՝ ցասում, վիշտ արտայայտող, հայրենի իշխանութիւններին ուղղուած բանաստեղծութիւնների մէջ:

Հայրենի պետական համակարգին ուղղուած նրբին մեղադրանքի մէջ անգամ բանաստեղծուհին տառապում է կարօտի զգացումից.

Աղգիս որդիքն օտար արեւի

Կռուկ եմ կանչում, Հայոց հաճարներն օտար պետութեան՝

Դափնիք եմ կերտում: Ողբայ, Հայաստան, Ես էլ եմ ողբում, Արցունքն աչքերիս՝ հողիդ կարօտում:

Շարունակուած էջ 8-էն

Միայն անցեալ մը չէ մեր Եկեղեցին, ինչպէս անցեալ չեն ո՛չ Հայ Ժողովուրդը, ո՛չ ալ Հայ Մշակոյթը:

Հետեւաբար, 90ամեակը կը թելադրէ մեզի՝ «Ապրիլ մեր Հաւատքը»՝ կրօնական եւ ազգային հաւատքը:

Այս է 90ամեակին կամրջուող հարազատ արտայայտութիւնը, կարգախօսը եւ աշխատանքի համոզումը Արեւմտեան Թեմի

այսօրուան Առաջնորդ Գերշն. Յովնան Արք. Տէրտէրեանին: Որովհետեւ միայն այս խօսքերը կրնան ճշգրտօրէն արտայայտել 90 տարիներէ աւելի իրագործուած եւ տակաւին իրագործելի «Եկեղեցական Առաքելութեան» բազմաթիւ իրագործումները՝ ի նպաստ մեր համայնքներու հոգեմտաւոր լուսաւորութեան:

«Մեր ձգտումը պիտի լինի նոր շունչ եւ ոգի տալ այն թանկագին ժառանգութեան՝ որ Եկեղեցին է» (Գարեգին Կթղ. Յովսէփեանց):

ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ ՇԻՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

Շարունակուած էջ 16-էն

Այլ պատկան մարմիններին յղած հեռագիրների պատասխանները, Ֆրանսական կառավարութիւնից տեղահանման արտօնութիւնը եւ ընդհանրապէս նրանց ապաստանի իրաւունք դեռ չապահոված, նկատի ունենալով ապստամբներին սպառնացող անմիջական վտանգը, իր անձնական պատասխանատուութեամբ հրամայել էր նրանց նաեւ փոխադրել: Ֆրանսական ծագումով ՄԱՐԴ, այդ օրերին աշխարհը կրակով բռնկած մարկանց նման չէր, թէկուզ եւ ինքն էլ զինուորականի համագրեւտ էր կրել: Պատերազմում իրար դաշնակցած ազգեր Տարտանէլի նեղուցի Կալիփոլի վայրում ծովային ամփոսնումի ճակատամարտ էին վարում, իր գլխաւորած նաւատորմի ղեկավարը մասնակցելու թուրքի դէմ կռուին: Նրան փոխարինող նշանակուած ուիշ մի ազնուազարմ Ֆրանսացի Քոնթր-Ամիրալ Տարբիէօյի ու Եգիպտոսի Ֆրանսական դեսպան՝ Տէֆրանի ջանքերով թոյլատրել էին «Մուսա Լեռ»-ան շէնքերի ապստամբներին Եգիպտոսի Փորթ-Սալիտ նաւահանգիստ տարհանել: Երկու օրերի նաւարկութիւնից յետոյ՝ Սեպտեմբերի 14-ից մինչեւ Սեպտեմբերի 16-ը, 4200 Մուսա Լեռցի լեռնականներին բնակեցրել Սուէզի Ջրանցքի արեւելեան փիլ Լազարէտտօ քարանթինային աւան, պատսպարել ՀԲԸՄ-ի տրամադրած 500 վրաններում: Անգլիական իշխանութիւնները, ուտելիքով ու բժշկական խնամքով ապահովել էին նորաբնակներին, Եգիպտոսի կառավարութիւնը պահանջուող մարդասիրական օգնութիւն էր ցու-

ցաբերել: Եգիպտոսի գաղութի առաջնորդները, «Կարմիր Խաչը», ՀԲԸՄը, այլ ընկերութիւններ եւ գաղութի հայ համայնքը ջերմ գուրգուրաքով շրջապատել էին՝ յաղթական կռուից վահանները վեր պահած լեռնականներին: Իսկ եթէ նաեւ չէր եւային . . . ընթացող, իմացի՛ր, թշնամու երեք հազար զօրքի ու չորս հազար աւարառուների դէմ՝ հինգ յաղթական ճակատամարտեր մղած լեռնականները, կարմիր խաչով դրօշակը քամուն պարզած կ'իջնէին իրենց լեռների բարձունքներից, իրենց Արմենական արիւնը որպէս հրաշէկ լաւա կը յորդէին Խաչէտ անունով միտիւրի Սուէտիէ աւանի վրայ:

Գիշերներին, վրանների առաջ կանգնած, լիալուսնի անուշ դէմքին էին նայել՝ տեսնելու իր երեսին ցուցող հայրենի շէներին, յաղթանականի կարմիր լոյսով վառուած լեռներին: Որպէս «Լեգէոնական» կամաւոր զինուորներ, նորէն կռուի ելան դուշմանի դէմ, քանդեցին մի հեռու «Արարա» լեռան նոյն դուշմանի դիրքերի պատնէշները, գերավարեցին հազարների, դէպի հիւսիս ճանապարհ բացեցին դաշնակից բանակների երթին, իրենք էլ նրանց հետ հայրենի աշխարհի չքնաղ Կիլիկեան ազատագրեցին: Դրժեցին իրենց փոքր դաշնակիցին տուած խոստումը...ցաւում է հոգից, դժուար է շարունակել...:

Կռուից եկած անուշ Պօղոս պապս, հայեացքը յառած հեռուներ, հոգին աւանդել Լազարէտտօ աւան, դին ամփոփել էին աւազուտներում: Նրա փոշիացած ոսկորներ ի հատիկները ջրանցքի արեւին լոյս էին վառել՝ անցնող նաւերի երթի ընթացքը լուսաւորել...:

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel:----- Email:-----

«Մանչեսթեր Եունայթեդը», «Մանչեսթեր Սիթին» եւ «Չելսին» Յաղթանակներ Տարան

Անգլիայի առաջնութեան 6-րդ տուրում «Մանչեսթեր Եունայթեդը» հիւրընկալուեց «Մաուլթհեմփթոնին» եւ առաւելութեան հասանալու համար հաշտուով: Աչքի ընկալեցին յարձակուող Ռոմեյլու Լուկակուն:



Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը պորտուգալացի ժոզէ Մոուրինիոյի գլխավորած թիմի մեկնարկային կազմում էր եւ փոխարինուեց 75-րդ րոպէին:

«Մանչեսթեր Եունայթեդը» 16 միաւորով երկրորդ տեղում է: Մրցաշարային աղիւսակը գլխավորում է «Մանչեսթեր Սիթին»:

Կատալոնացի Խոսեպ Գուարդիոլայի գլխավորած թիմը 5:0 հաշուով յաղթեց «Քրիսթալ Փելասին» եւ նոյնպէս ունի 16 միաւոր, սակայն գերազանցում է «Մանչեսթեր Եունայթեդի» խփած եւ բաց թողած կոլերի տարբերութեամբ:

Երրորդ տեղ բարձրացաւ ախոյեան «Չելսին», որը 4:0 հաշուով պարտութեան մատնեց «Սթոք Սիթին» եւ վաստակել է 13 միաւոր:

«Ինտերն» Ու «Լացիոն» Յաղթեցին, «Միլանը» Պարտուեց

Իտալիայի առաջնութեան 6-րդ տուրում «Ինտերը» տանը նուազագոյն հաշուով պարտութեան մատնեց «Ջենոային» եւ 16 միաւորով երրորդ տեղում՝ 2-ական միաւոր գիշերով «Նապոլիի» եւ «Եովենտուսին»:

«Լացիոն» հիւրընկալուելիս 3:0 հաշուով յաղթեց «Վերոնային» եւ 13 միաւորով չորրորդ տեղում է:

«Միլանը» դրսում 0:2 հաշուով պարտուեց «Սամպորիային» եւ 6-րդն է՝ 12 միաւոր:

Մուրինիո. «Վեց Թիմ Կը Մասնակցի Պրեմյեր Լիգայի Ախոյեանական Մրցավազքին»

«Մանչեսթեր Եունայթեդի» պորտուգալացի գլխավոր մարզիչ ժոզէ Մոուրինիոն դեռ չի շտապում կանխատեսումներ անել Անգլիայի ախոյեանի տիտղոսի համար պայքարում իր թիմի հնարաւորութիւնների մասին: Պրեմյեր լիգայի 6-րդ տուրում «Եունայթեդը» հիւրընկալուելիս 1:0 հաշուով յաղթել էր «Մաուլթհեմփթոնին» բեյքիացի յարձակուող Ռոմեյլու Լուկակունի կողմից շնորհիւ:



«Կարծում եմ՝ դեռ շատ շուտ է տիտղոսի մասին մտածելու համար: Եթէ չեմ սխալուում, անցած մրցաշրջանում այս փուլում 5 կամ 6 միաւոր քիչ ունեւինք: Դա նշանակում է, որ հիմա մենք աւելի լաւ ենք խաղում, քան անցած առաջնութեան սկզբում: Սա դեռ միայն սկիզբն է: Շուտով կը սկսուի բարդ փուլը, կը կուտակուի անցկացրած հանդիպումների մեծ քանակ: Կարծում եմ՝ վեց թիմ կը մասնակցի ախոյեանական մրցավազքին», - Մոուրինիոյի խօսքը մէջբերում է BBC-ն:

Մեսին Ալկասերին Խորհուրդ է Տուել Զեռանալ «Բարսելոնայից»

«Բարսելոնայի» արժենտինացի յարձակուող Լիոնել Մեսին կատալոնական թիմի սպանացի յարձակուող Պակո Ալկասերին խորհուրդ է տուել արդէն ձմեռային տրանսֆերային պատուհանի ժամանակ տեղափոխուել աչնպիսի ակումբ, որտեղ մշտական տեղ կ'ունենայ մեկնարկային կազմում:



Մեսին ու Ալկասերը մօտ ընկերներ են: Սպանիայի հաւաքականի ֆուտպոլիստը հազուադէպ է յայտնուում Էռնեստո Վալվերդէի գլխավորած թիմի մեկնարկային կազմում:

24-ամեայ ֆուտպոլիստը 2016-ին «Վալենսիայից» է տեղափոխուել «Բարսելոնա»: Սպանիայի ընթացիկ առաջնութիւնում նա մասնակցել է 2 հանդիպման, կատարել 1 կոլային փոխանցում:

«Շիրակը»՝ Հայաստանի Սուպերգաւաթակիր



Ֆուտպոլի Հայաստանի ախոյեան «Ալաշկերտն» ու գաւաթակիր Գիւմրիի «Շիրակը» մայրաքաղաքի Վազգէն Սարգսեանի անունան «Հանրապետական» ստադիոնում վիճարկեցին Հայաստանի սուպերգաւաթը:

Բակայոկոյի եւ Մարտուն Մխիթարեանի խփած կոլերի շնորհիւ յաղթանակ տարաւ Վարդան Բիչախեանի գլխավորած «Շիրակը», որը 5-րդ անգամ նուաճեց այս տիտղոսը:

Աշխարհի Գաւաթ. «Լեւոն Արոնեան - Դին Լիրեն՝ Ոչ Որի 31 Քայլում»



Թբիլիսիում ընթացող շախմատի աշխարհի գաւաթի խաղարկութեան եզրափակիչում տեղի ունեցաւ երրորդ դասական պարտիան: Հայաստանի հաւաքականի առաջատար Լեւոն Արոնեանը (2802) եւ Չինաստանի ուժեղագոյն գրոսմայստեր Դին Լիրենը (2771) 31-րդ քայլում համաձայնեցին ոչ ոքի արդիւնքի: Սպիտակներով խաղաց հայ գրոսմայստերը:

Սա երրորդ ոչ ոքին էր: Սեպտեմբերի 26-ին կայանալիք չորրորդ դասական պարտիայում էլ հաւասարութեան դէպքում, Սեպտեմբերի 27-ին կ'անցկացուի թայք-բրեյքը:

Երկու գրոսմայստերները ապահովել են 2018թ. Մարտին Բեռլինում կայանալիք աշխարհի ախոյեանի հաւակնորդների մրցաշարի ուղեգրեր: Լեւոն Արոնեանը 2005թ. աշխարհի գաւաթակիրն է:

«Եովենտուսի» Ռեկորդային Եկամուտը՝ +174 Միլիոն Եւրօ

«Եովենտուսը» գեկուցել է անցած ֆինանսական տարուայ արդիւնքում ռեկորդային եկամուտի մասին: Յունիսի 30-ին աւարտուած տարեկան փուլում թուրինեան ակումբն ունեցել է 562,7 միլիոն եւրօյի եկամուտ: Շահույթը կազմել է 42,6 միլիոն եւրօ:

Նախորդ ֆինանսական տարուայ համեմատ, «Եովենտուսի» եկամուտն աճել է 174,8 միլիոն եւրօյով: Շահույթն աւելացել է 38 միլիոն եւրօյով:

Անցած մրցաշրջանում «Եովենտուսը» դարձել է իտալիայի ախոյեան եւ գաւաթակիր, Ախոյեանների լիգայի եզրափակիչում պարտուել է Մադրիդի «Ռեալին»:

Հ.Ս.Ս. ՖՈՒԹՊՈՒԼԻ ԽՈՒՄԲԵՐՈՒ ՅԱԶՈՐԴ ԽԱՂԵՐՈՒ 3ԱՅՏԱԳԻՐԸ H.M.M. SOCCER TEAMS NEXT GAME SCHEDULE

HOMENMEN SAHARA TEAM
- Sunday 10/1/17 5:35 pm Homenmen Sahara VS Cavalry FC
John Ferraro soccer field #5 Zoo Drive

HOMENMEN ANGEL TEAM
- Sunday 10/1/17 3:40pm Homenmen Angel VS Inter LA
Sepulveda Basin Balboa Van Nuys